ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ

2003
ԹԻՎ 7(59)
ՀՈՒԼԻՍ
ԹՈՂԱՐԿՄԱՆ 10-ՐԴ ՏԱՐԻ

տեղեկագիր

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի որոշումները «Գլաձորբանկ» ՓԲԸ-ն որպես «Գլաձոր ունիվերսալ վարկային կազմակերպություն» ՓԲԸ վերագրանցելու և լիցենզիա տրամադրելու, «Արդշինբրոք» ՍՊԸ-ին տրամադրված արտարժույթի առք ու վաճառքի արժութային դիլերի լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու և «Սագարել» ՍՊԸ-ին ու «Արմեն Մխիթարյան և Ընկերներ» լիակատար ընկերակցությանը արտարժույթի առք ու վաճառքի լիցենզիաներ տրամադրելու վերաբերյալ 5

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի թիվ 233 և 235 որոշումները ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 1999 թ. նոյեմբերի 2-ի թիվ 179, 2001 թ. մայիսի 30-ի թիվ 142 և 2002 թ. փետրվարի 6-ի թիվ 39 որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին 5

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի որոշումները ֆինանսական շուկայում ՀՀ կենտրոնական բանկի գործառնությունների տոկոսադրույքների վերաբերյալ 5

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի թիվ 234-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2002 թվականի ապրիլի 2-ի թիվ 87 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 5

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի թիվ 236-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2002 թվականի նոյեմբերի 18-ի թիվ 363-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 6

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի թիվ 1 պաշտոնական պարզաբանումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի և Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից համատեղ հաստատված «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի վարկերի և դեբիտորական պարտքերի դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման կարգի» 3.6 կետի կիրառման մասին» 10

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահի թիվ 1/236Ա որոշումը «Բանկերի ղեկավարների թեկնածուների որակավորումը և մասնագիտական համապատասխանությունը ստուգելու վերաբերյալ» 11
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահի թիվ 1/246Լ որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից բանկերի հետ լոմբարդային վարկերի տրամադրման, ավանդների ներգրավման, ռեպո և հակադարձ ռեպո, պետական արժեթղթերի առքի ու վաճառքի գործարքների կնքման հայտերի ներկայացման, դրանց ամփոփման և արդյունքների հայտարարման կարգը» հաստատելու վերաբերյալ» 20
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահի թիվ 1/250Լ որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի հետ արտարժույթի առք ու վաճառքի, արժութային սվոփ, արտարժույթի կանխիկացման և ապականխիկացման գործառնությունների կնքման գլխավոր համաձայնագրի մասին» 21
ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ 37

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ

ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ,
ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՊԱՐՁԱԲԱՆՈՒՄԸ,
ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ Է ԸՆԴՈՒՆԵԼ

- «Գլաձորբանկ» փակ բաժնետիրական ընկերությունը որպես «Գլաձոր ունիվերսալ վարկային կազմակերպություն» փակ բաժնետիրական ընկերություն ***վերագրանցելու*** և նրան ունիվերսալ վարկային կազմակերպության ***լիցենզիա տրամադրելու մասին*** (որոշում թիվ 224):

- «Արդշինբրոք» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված արտարժույթի առք ու վաճառքի արժութային դիլերի թիվ 21 լիցենզիան ***ուժը կորցրած ճանաչելու մասին*** (որոշում թիվ 227):

- «Սագարել» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (որոշում թիվ 228) և «Արմեն Մխիթարյան և Ընկերներ» լիակատար ընկերակցությանը (որոշում թիվ 247) արտարժույթի առք ու վաճառքի ***լիցենզիաներ տրամադրելու մասին*** :

- ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 1999 թվականի նոյեմբերի 2-ի թիվ 179 (որոշում թիվ 233), ինչպես և 2001 թ. մայիսի 30-ի թիվ 142 և 2002 թ. փետրվարի 6-ի թիվ 39 (որոշում թիվ 235) որոշումները ***ուժը կորցրած ճանաչելու մասին*** :

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՇՈՒԿԱՅՈՒՄ ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի «գ» ենթակետով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի որոշումներով 2003 թվականի հուլիսի 11-ին և 25-ին ***ՀՀ կենտրոնական բանկի կողմից կնքվող ռեպո համաձայնագրերի տոկոսադրույքը սահմանվել է 10 %, ՀՀ կենտրոնական բանկի կողմից տրամադրվող լոմբարդային վարկերի տոկոսադրույքը՝ 20 %, ՀՀ կենտրոնական բանկի կողմից ներգրավվող ավանդների տոկոսադրույքը՝ 5 %*** (որոշումներ թիվ 239, 250):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄԸ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2002 թվականի ապրիլի 2-ի թիվ 87 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին*

Հիմք ընդունելով «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածը, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2002 թվականի ապրիլի 2-ի ««Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի կողմից Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ ներկայացվող համախմբված հաշվետվությունների կազմման կարգը» հաստատելու մասին» թիվ 87 որոշման 1-ին կետով հաստատված «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի կողմից Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ ներկայացվող համախմբված հաշվետվությունների կազմման կարգում» կատարել հետևյալ փոփոխություններն ու լրացումները՝

1.1. կարգի 2.3 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«2.3. Վերահսկում՝ կազմակերպության գործունեությունից օգուտներ ստանալու նպատակով նրա ֆինանսական և գործառնական քաղաքականությունը ղեկավարելու իրավունքն է:

** Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2003 թ. հուլիսի 1-ին:*
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 19.07.03 թ. (ՀՀՊՏ N19 (137), 1.08.03):

Վերահսկման իրավունքը համարվում է ստացված, երբ կազմակերպություններից մեկը ձեռք է բերում մյուս կազմակերպության ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի (բաժնեմասերի) կեսից ավելին, եթե միայն բացառիկ դեպքերում չի կարելի հստակ ցույց տալ, որ այդպիսի սեփականության իրավունքն իրենից վերահսկում չի ներկայացնում: Եթե նույնիսկ միավորվող կազմակերպություններից մեկը ձեռք չի բերում միավորվող մյուս կազմակերպության ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի (բաժնեմասերի) կեսից ավելին, դեռևս հնարավոր է որոշել ձեռք բերողին, եթե կազմակերպություններից մեկը ձեռք է բերում մյուսի ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի 4.99%-ից ավելին, և առկա է հետևյալ պայմաններից որևէ մեկը՝

ա) այլ ներդրողների հետ համաձայնության հիման վրա՝ այլ կազմակերպության ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի (բաժնեմասերի) կեսից ավելիի նկատմամբ իրավունք, կամ

բ) կանոնադրության կամ համաձայնագրի հիման վրա, ինչպես նաև այլ կերպ՝ այլ կազմակերպության ֆինանսական կամ գործառնական քաղաքականության նկատմամբ կառավարման իրավունք, կամ ընթացիկ գործունեության կանխորոշման հնարավորություն, կամ

գ) այլ կազմակերպության տնօրենների խորհրդի կամ կառավարման համազոր մարմնի անդամների մեծամասնությանը նշանակելու կամ պաշտոնանկ անելու իրավունք, կամ

դ) այլ կազմակերպության տնօրենների խորհրդի կամ կառավարման համազոր մարմնի ժողովներում ձայնի մեծամասնության նկատմամբ իրավունք»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Տ. ՍԱՐԳՍՅԱՆ
4 հուլիսի 2003 թ., N 234-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄԸ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2002 թվականի նոյեմբերի 18-ի թիվ 363-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին*

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետը, 35-րդ հոդվածի 3-րդ մասը և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2002 թվականի նոյեմբերի 18-ի ««Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի, վարկային կազմակերպությունների, օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի հաճախորդների վարկարժանության տեղեկատվական համակարգի՝ վարկային ռեգիստրի ստեղծման և վարկային ռեգիստրին Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի, վարկային կազմակերպությունների, օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի մասնակցության կարգը» հաստատելու մասին» թիվ 363-Ն որոշմամբ հաստատված կարգում (այսուհետև՝ կարգ) կատարել հետևյալ փոփոխություններն ու լրացումները.

1.1. կարգի 6-րդ կետը լրացնել հետևյալ պարբերությամբ.

«Փոխառության վերաբերյալ տեղեկատվությունը ժամկետանց օրերի գծով համարվում է փոփոխված, եթե Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 1999 թվականի ապրիլի 23-ի թիվ 63 որոշմամբ և Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 1999 թվականի հունիսի 4-ի թիվ 214-Ա հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի վարկերի ու դեբիտորական պարտքերի դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման կարգի» 3.11 կետի օբյեկտիվ չափանիշի հիման վրա տեղի է ունեցել ակտիվի դասի փոփոխություն».

** Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2003 թ. հուլիսի 1-ին:*
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 29.07.03 թ. (ՀՀԳՏ N20(138), 15.08.03):

1.2. կարգի 13-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«13. Ընթացիկ տեղեկատվությունը ստանալու համար վարկատուն սույն կարգի թիվ 5 հավելվածով սահմանված ձևով, էլեկտրոնային եղանակով, վարկային ռեգիստր է ներկայացնում համապատասխան հարցում: Վարկային ռեգիստրի կողմից տեղեկատվությունը պետք է վարկատուին տրամադրվի հարցումը ստանալուց ոչ ուշ, քան երեք աշխատանքային օրվա ընթացքում, բացառությամբ այլ տեղեկատվության, որը վարկային ռեգիստրի կողմից վարկատուին տրամադրվում է ոչ ուշ, քան հարցումը ստանալու օրվանից տասն աշխատանքային օրվա ընթացքում: Վարկային ռեգիստրում առկա այլ տեղեկատվություն պահանջելու դեպքում վարկատուն առանձին աղյուսակով հարցմանը պարտավոր է կցել նաև վարկառուի վերաբերյալ իրեն անհրաժեշտ՝ սույն կարգով սահմանված լրացուցիչ տեղեկատվության ցանկը: Վարկային ռեգիստրի կողմից փաստաթղթային եղանակով տրամադրվող տեղեկատվությունն ստորագրվում է վարկային ռեգիստրի վարման համար պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի կողմից: Վերջինիս բացակայության դեպքում փաստաթղթերը ստորագրում է վարկային ռեգիստրի վարման համար պատասխանատու ստորաբաժանման՝ տեղեկատվության տրամադրման համար պատասխանատու աշխատակիցը».

1.3. կարգի հավելված 1-ը շարադրել նոր խմբագրությամբ (կցվում է).

1.4. կարգի հավելված 1-ի լրացման կարգը լրացնել 23^1-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

1.5. «23^1. Լրացվում է վարկի, դրա գծով տոկոսագումարների, մասնակի մարումների ժամկետանց կամ վերաևայված օրերի քանակը՝ համաձայն «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի վարկերի ու դեբիտորական պարտքերի դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման կարգի»».

1.6. կարգի հավելված 3-ը շարադրել նոր խմբագրությամբ (կցվում է).

1.7. կարգը լրացնել հավելված 4ա-ով (կցվում է).

1.8. հավելված 8-ի «Համակարգում ձևավորվող ֆայլերի անվանումները և տիպերը» 1-ին կետի «Կենտրոնական բանկից փոխանցվող հաշվետվությունների ֆայլերի անվանումները և տեսակները» 1.5 ենթակետում շարադրել 4ա հավելվածում ներկայացված ֆայլի անվանումը և տիպը՝

«Ֆայլի անվանումը պարունակում է 16 նիշ (1x8d3n.XLS)՝

1x - հաշվետվության տեսակը, որը տվյալ դեպքում ներկայացվում է S- տառով,

8d - ֆայլի ձևավորման ամսաթիվը (yyyymmdd, տարիամիսօր ֆորմատով),

3n - վարկատուի կոդը (այն վարկատուի կոդը, որին հասցեագրված է ֆայլը),

XLS - *ֆայլի ընդլայնում».*

1.9. հավելված 8-ի «Հաղորդագրությունների կառուցվածքը և դաշտերի նկարագրությունը» 2-րդ կետի «Շտեմարանում գրանցվող վարկի կառուցվածքը» 2.2 ենթակետի աղյուսակը լրացնել հավելված 1-ի նոր դաշտի ֆորմատով՝

Պ/Օ	Դաշտի կոդը	Դաշտի անվանումը	Դաշտի ֆորմատը
O	408	Ժամկետանց օրերի քանակը	*

և համապատասխանորեն «Դաշտերի նկարագրությունում» լրացնել՝

«դաշտ:408: ժամկետանց օրերի քանակը

ֆորմատ *

այս դաշտում նշվում է վարկի, դրա գծով տոկոսագումարների, մասնակի մարումների ժամկետանց կամ վերաևայված օրերի առավելագույն քանակը»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2003 թվականի սեպտեմբերի 1-ից:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Տ. ՍԱՐԳՍՅԱՆ
7 հուլիսի 2003 թ., N 236-Ն

Վարկային ռեգիստր ներկայացվող հիմնական տեղեկատվությունը վարկառուի վերաբերյալ

Հաշվետվության ամսաթիվը	
Վարկի կոդը վարկային ռեգիստրում	

1	Տեղեկատվությունը ներկայացնող վարկատուի (տարածքային ստորաբաժանման) կոդը		
2	Պայմանագրի համարը		
3	Պայմանագրի ամսաթիվը		
4	Վարկառու		
4.1	Վարկառուի կարգավիճակը		
4.2	Վարկառուի անվանումը		
4.3	Վարկառուի ռեզիդենտությունը		
4.4	Վարկառուի հարկային կոդը (ֆիզիկական անձանց համար՝ անձնագրի տվյալները)		
4.5	Վարկառուի գտնվելու վայրը		
4.6	Սեփականության ձևը		
5	Վարկատուի հետ կապվածությունը (ըստ բանկային օրենսդրության)		
6	Մասնակիցների տվյալները	x	
6.1	Մասնակիցների կարգավիճակը		
6.2	Անվանումը (ֆիզիկական անձանց անունը, ազգանունը, հայրանունը), կազմակերպական-իրավական տեսակը		
6.3	Հարկային կոդը (ֆիզիկական անձանց անձնագրի տվյալները)		
6.4	Գտնվելու վայրը		
6.5	Ռեզիդենտությունը		
6.6	Սեփականության ձևը		
7	Գործադիր տնօրենը (անունը, ազգանունը, անձնագրի տվյալները և այլն)		
8	Վարկառուի հետ փոխկապակցված անձանց կողմից տվյալ վարկատուի հանդեպ ստանձնած և դեռևս չմարված պարտավորությունների առկայության դեպքում (ներառյալ՝ արտահաշվեկշռային պարտավորությունները) փոխկապակցված անձանց տվյալները	x	
8.1	Փոխկապակցված անձի կարգավիճակը		
8.2	Անվանումը (ֆիզիկական անձանց անունը, ազգանունը, հայրանունը)		
8.3	Հարկային կոդը (ֆիզիկական անձանց անձնագրի տվյալները)		
8.4	Գտնվելու վայրը		
8.5	Ռեզիդենտությունը		
8.6	Սեփականության ձևը		
9	Փոխկապակցված անձի վարկի կոդը վարկային ռեգիստրում		
10	Վարկի տրամադրման ամսաթիվը (փաստացի)		
11	Վարկի տեսակը		
12	Վարկի մարման ամսաթիվը (ըստ պայմանագրի)		
13	Վարկի մարման ամսաթիվը (վերջին գումարի փաստացի մարում)		
14	Վարկի տրամադրման աղբյուրը (միջազգային ծրագրով է, թե ոչ)		
15	Պայմանները		
16	Վարկի օգտագործման վայրը		
17	Վարկի օգտագործման ոլորտը		
18	Գրավի գնահատված արժեքը (ըստ գրավի պայմանագրի)		
19	Գրավի առարկան		
20	Գրավի վերաբերյալ այլ նշումներ		
21	Երաշխավորողի տվյալները		
21.1	Երաշխավորողի կարգավիճակը		
21.2	Երաշխավորողի անվանումը (ֆիզիկական անձանց անունը, ազգանունը, հայրանունը)		
21.3	Երաշխավորողի հարկային կոդը (ֆիզիկական անձանց անձնագրի տվյալները)		
21.4	Երաշխավորողի գտնվելու վայրը		
21.5	Ռեզիդենտությունը		
21.6	Սեփականության ձևը		
22	Երաշխիքի գումարը		
23	Վարկային ռիսկի դասը		
23.1	Ժամկետանց օրերի քանակը		
24	Մասհանման գումարը		
25	Վարկի վիճակը		

Վարկային ռեգիստրի կողմից տրամադրվող ելքային ընթացիկ տեղեկատվություն

ամսաթիվ _____/_____/

	1	*2*
1	Վարկառուի անվանումը/անունը, ազգանունը, կազմակերպական-իրավական տեսակը	
2	Հարկային կոդը/անձնագրի տվյալները	
3	Վարկառուի ռեզիդենտությունը	
4	Վարկ (գործող) տրամադրած վարկատուների քանակը	
5	Ամերիկայի Միացյալ Նահանգների դոլար/Հայաստանի Հանրապետության դրամ փոխարժեքը/ամսաթիվը	

Գործող	Հերթական համար	Վարկի տեսակը	Տարեկան տոկոսադրույքը	Վարկի վճարման ամսաթիվը	Պարտավորության մնացորդը	Ժամկետանց տոկոսների գումարը	Ժամկետանց տոկոսների հաշվարկման ամսաթիվը	Ընդհանուր ծախսերը	Ժամկետանց տոկոսների գումարը	Ընդհանուր տոկոսների գումարը	Ընդհանուր ծախսերի գումարը	Ընդհանուր ժամկետանց գումարը (վնասվածքի գումարը)	Ընդհանուր գումարը	Վերջին ծախսերի գումարը	Ընդհանուր
		1	*2*	*3*	*4*	*5*	*6*	*7*	*8*	*9*	*10*	*11*	*12*	*13*	*14*	*15*	*16*
	1																
	2																
	…																
		x	x	x	x						x	x	x	x	x	x	x
Մասնակ		*1*	*2*	*3*	*4*	*5*	*6*	*7*	*8*	*9*	*10*	*11*	*12*	*13*	*14*	*15*	*16*
	1																
	2																
	…																
		x	x	x	x						x	x	x	x	x	x	x

Տրամադրված երաշխիքներ

Գործող	Հերթական համար	Գործող		
		Երաշխիքի գումարը	Վարկի տրամադրման ամսաթիվը	Վարկի մարման ամսաթիվը (ըստ պայմանագրի)
		1	*2*	*3*
	1			
	2			
	…			
			x	x

Վարկառուի հետ փոխկապակցված անձանց պարտավորությունները բանկային համակարգի նկատմամբ

1	Վարկերի քանակը	
2	այդ թվում՝ ժամկետանց	
3	Ընդհանուր գումարը	
4	այդ թվում՝ ժամկետանց	

Հավելված 4ա

Վարկային ռեգիստրի կողմից տրամադրվող ելքային պարբերական տեղեկատվություն

Ամսաթիվ----------/----------/

Վարկատուի կոդը----------/

	Հաճախորդ			Վարկեր, որտեղ հաճախորդը վարկառու է							Վարկեր, որտեղ հաճախորդը երաշխավորող է								Վարկեր, որտեղ հաճախորդը փոխկապակցված անձ է						
	Հաշվարկի կոդ / սուբյեկտի կիրառում	Անուն (պատճառ)	Ազգանուն	Վարկային հաշվի համար	Պայմանագրի կնքման ամսաթիվ	Տրված գումար	Փաստացի մնացորդ	Ժամկետանց գումար	Ժամկետանց օրերի քանակ	Առաջին ժամ-կետանց օրվան հետևյալ օրերի քանակ	Երաշխիքի գումար	Վարկի հաշվեհամար	Պայմանագրի կնքման ամսաթիվ	Տրված գումար	Փաստացի մնացորդ	Ժամկետանց գումար	Ժամկետանց օրերի քանակ	Առաջին ժամ-կետանց օրվան հետևյալ օրերի քանակ	Վարկային հաշվի համար	Պայմանագրի կնքման ամսաթիվ	Տրված գումար	Փաստացի մնացորդ	Ժամկետանց գումար	Ժամկետանց օրերի քանակ	Առաջին ժամ-կետանց օրվան հետևյալ օրերի քանակ
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22	23	24	25
1																									
2																									
3																									
4...																									

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄԸ

ՀՀ կենտրոնական բանկի և ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից համատեղ հաստատված «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի վարկերի և դեբիտորական պարտքերի դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման կարգի» 3.6 կետի կիրառման մասին

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի «իէ» կետը և «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 87-րդ հոդվածի 2-րդ կետի «բ» ենթակետը՝ ՀՀ կենտրոնական բանկի և ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից համատեղ հաստատված «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի վարկերի ու դեբիտորական պարտքերի դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման կարգի» (այսուհետև՝ ակտիվների դասակարգման կարգ) 3.6 ենթակետի կիրառման նպատակով ՀՀ կենտրոնական բանկի խորհուրդը պարզաբանում է, որ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերը բանկային համակարգի կողմից միևնույն փոխառուին տրամադրված վարկերը և այլ դեբիտորական պարտքերը պետք է դասակարգեն միասնական ամենախիստ դասով՝ առաջնորդվելով.

ա) տվյալ փոխառուին բանկերի կողմից տրված փոխառությունների ժամկետանց օրերի քանակի վերաբերյալ վարկային ռեգիստրից ստացված տեղեկատվությամբ՝ համաձայն ակտիվների դասակարգման կարգի 3.11 կետի օբյեկտիվ չափանիշների,

բ) այս կամ այն փոխառուի անհատական վարկի դասը խստացնելու վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի վերահսկողության ծառայության սուբյեկտիվ կարծիքով:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Տ. ՍԱՐԳՍՅԱՆ
7 հուլիսի 2003 թ., N 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՈՐՈՇՈՒՄԸ

Բանկերի ղեկավարների թեկնածուների որակավորումը և մասնագիտական համապատասխանությունը ստուգելու վերաբերյալ հարցաշարերը և բանավոր քննության թեմաների ցանկը հաստատելու վերաբերյալ

Ղեկավարվելով «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 1-ին կետով և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 19.02.2002 թ. թիվ 49 որոշմամբ հաստատված «Բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի գրանցումն ու լիցենզավորումը, մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցումը» կանոնակարգ 1-ի 22-րդ կանոնի 10-րդ կետով և հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածը՝ որոշում եմ.

1. Հաստատել բանկի գործադիր տնօրենի, գործադիր տնօրենի տեղակալի, վարչության նախագահի և անդամների, ժամանակավոր ադմինիստրացիայի ղեկավարի, վերստուգիչ հանձնաժողովի նախագահի, նախագահի տեղակալի և անդամների, ներքին հսկող խմբի ղեկավարի, բանկի, բանկի մասնաճյուղի և օտարերկրյա բանկի մասնաճյուղի գլխավոր հաշվապահի որակավորման և մասնագիտական համապատասխանության ստուգման տեստի հարցաշարերը՝ համաձայն հավելված 1-ի (կցվում է):

2. Հաստատել բանկի գործադիր տնօրենի (վարչության նախագահի), ժամանակավոր ադմինիստրացիայի ղեկավարի, բանկի, բանկի մասնաճյուղի և օտարերկրյա բանկի մասնաճյուղի գլխավոր հաշվապահի, բանկի վերստուգիչ հանձնաժողովի նախագահի, տեղակալի և անդամների, բանկի ներքին հսկող խմբի ղեկավարի, բանկի գործադիր տնօրենի տեղակալի, վարչության անդամի, մասնաճյուղի կառավարչի, օտարերկրյա բանկի մասնաճյուղի կառավարչի թեկնածուների բանավոր քննության թեմաների ցանկերը՝ համաձայն հավելված 2-ի (կցվում է):

3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահի 2002 թ. մարտի 25-ի թիվ 191 հրամանը:

4. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի աշխատակազմին՝ մեկամսյա ժամկետում հրապարակել սույն որոշմամբ հաստատված տեստերի հարցաշարերը և բանավոր քննության թեմաների ցանկերը:

5. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի բանկային մեթոդաբանության և վերլուծությունների վարչությանը՝ երկօրյա ժամկետում սույն որոշմամբ հաստատված տեստերի հարցաշարերը և բանավոր քննության թեմաների ցանկերը շրջաբերական նամակով ուղարկել Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերին:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Տ. ՍԱՐԳՍՅԱՆ
2 հուլիսի 2003 թ., N 1/236Ա

Հավելված 1
Հաստատված է
ՀՀ կենտրոնական բանկի նախագահի
2003 թվականի հուլիսի 2-ի թիվ 1/236Ա որոշմամբ

Հ Ա Ր Ց Ա Շ Ա Ր

ԲԱՆԿԻ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻ ՏԵՂԱԿԱԼԻ, ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄԻ, ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿԱՌԱՎԱՐՉԻ, ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԲԱՆԿԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿԱՌԱՎԱՐՉԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ՏԵՍՏԻ

1. Բանկային գործունեության բնորոշումը
2. Բանկային ավանդ համարվող հաշիվները
3. Բանկի մասնակիցները
4. Փոխկապակցված անձինք
5. Բանկի տարածքային ստորաբաժանումները

6. Բանկի տարածքային ստորաբաժանումների կողմից իրականացվող գործառնությունները
7. Բանկի կանոնադրական հիմնադրամի համալրումը
8. Բանկի կանոնադրական հիմնադրամում նշանակալից մասնակցության ձեռքբերումը և սահմանափակումները
9. Բանկի կառավարման մարմինները
10. Վերստուգիչ հանձնաժողովը, կազմը, իրավասությունները, գործառույթները
11. Բանկի ներքին հսկողությունը
12. Բանկի ղեկավարները
13. Բանկի կանոնադրությանը ծանոթանալու հնարավորության ընձեռումը
14. Բանկի կանոնադրության փոփոխությունների գրանցումը
15. Բանկի լիցենզիայի անվավեր ճանաչումը և դրա իրավական հետևանքները
16. Բանկի ներդրումային գործունեությունը և սահմանափակումները
17. Բանկի բաժանորդագրական գործունեությունը
18. Բանկի կողմից իր բաժնետոմսերը գնելը կամ ձեռք բերելը
19. Բանկի կողմից արժեթղթերով գործառնություններ իրականացնելու իրավական հիմքերը
20. Բանկի և հաճախորդի փոխհարաբերությունները
21. Բանկային գործունեության սահմանափակումները
22. Բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները
23. Բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվների սահմանաչափերը
24. Բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվների հաշվարկման կարգը
25. Բանկի ընդհանուր կապիտալի տարրերը
26. Արտարժութային դիրքի տեսակները
27. Ակտիվների դասակարգումն ըստ ռիսկի
28. Ակտիվների դասակարգումն ըստ իրացվելիության
29. Հատուկ տնտեսական նորմատիվները
30. Օրենսդրության խախտումները
31. Օրենսդրության խախտումների համար կիրառվող պատժամիջոցները
32. Տույժի կիրառման հիմքը և առավելագույն չափը
33. Բանկի ղեկավարների նկատմամբ տուգանքի նշանակումը
34. Բանկի կողմից ՀՀ կենտրոնական բանկում թղթակցային հաշվի բացումը
35. Բանկերի կողմից պարբերաբար հրապարակվող տեղեկությունները
36. Շահառու հասկացության սահմանումը
37. Բանկերում գույքահարկով հարկվող օբյեկտները
38. Բանկի անվճարունակության հիմքերը
39. Բանկի ժամանակավոր ադմինիստրացիան
40. Բանկի ֆինանսական առողջացման ծրագիրը
41. Սնանկ ճանաչված բանկի լուծարման ընթացակարգը
42. Լուծարվող բանկի պահանջների բավարարման հերթականությունը
43. Գրավի իրացումից հետո պահանջների բավարարման հերթականությունը
44. Ընթացիկ հաշվի գործարքները
45. Վարկերի և տոկոսների մարման հերթականությունը
46. Վարկերի ու դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների պահուստի ձևավորման և օգտագործման կարգը
47. Ինվեստիցիոն արժեթղթերում ներդրումների հնարավոր կորուստների պահուստի ձևավորման և օգտագործման կարգը
48. Բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների հրապարակումը
49. Բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների տրամադրումը
50. «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի պահանջների խախտման համար պատասխանատվությունը
51. Բաց բաժնետիրական բանկի մասնակիցների և արտոնյալ բաժնետոմսերի թիվը
52. Արժեթղթերի տեսակները՝ համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի
53. Բանկի շահութաբերության ցուցանիշները
54. Պարտատոմսերի եկամտաբերությունը և եկամտաբերության կորը. դյուրացիա
55. Ածանցյալ գործիքներ
56. Ֆինանսական գործակիցներ
57. Եկամուտ և ծախս համարվող տարրերը՝ ըստ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի

Հ Ա Ր Ց Ա Շ Ա Ր

ԲԱՆԿԻ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻ (ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ), ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱԴՄԻՆԻՍՏՐԱՑԻԱՅԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ՏԵՍՏԻ

1. Բանկային գործունեության բնորոշումը
2. Բանկային ավանդ համարվող հաշիվները
3. Բանկի մասնակիցները
4. Փոխկապակցված անձինք
5. Բանկի տարածքային ստորաբաժանումները
6. Բանկի տարածքային ստորաբաժանումների կողմից իրականացվող գործառնությունները
7. Բանկի կանոնադրական հիմնադրամի համալրումը
8. Բանկի կանոնադրական հիմնադրամում նշանակալից մասնակցության ձեռքբերումը և սահմանափակումները
9. Բանկի կառավարման մարմինները
10. Վերստուգիչ հանձնաժողովը, կազմը, իրավասությունները, գործառույթները
11. Բանկի ներքին հսկողությունը
12. Բանկի ղեկավարները
13. Բանկի կանոնադրությանը ծանոթանալու հնարավորության ընձեռումը
14. Բանկի կանոնադրության փոփոխությունների գրանցումը
15. Բանկի ներդրումային գործունեությունը և սահմանափակումները
16. Բանկի բաժանորդագրական գործունեությունը
17. Բանկի կողմից իր բաժնետոմսերը գնելը կամ ձեռք բերելը
18. Բանկի կողմից արժեթղթերով գործառնություններ իրականացնելու իրավական հիմքերը
19. Բանկի և հաճախորդի փոխհարաբերությունները
20. Բանկային գործունեության սահմանափակումները
21. Բանկերի համար սահմանվող հիմնական տնտեսական նորմատիվները
22. Բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվների սահմանաչափերը
23. Բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվների հաշվարկման կարգը
24. Բանկի ընդհանուր կապիտալի տարրերը
25. Արտարժութային դիրքի տեսակները
26. Ակտիվների դասակարգումն ըստ ռիսկի
27. Ակտիվների դասակարգումն ըստ իրացվելիության
28. Հատուկ տնտեսական նորմատիվները
29. Օրենսդրության խախտումները
30. Օրենսդրության խախտումների համար կիրառվող պատժամիջոցները
31. Տույժի կիրառման հիմքը և առավելագույն չափը
32. Բանկի ղեկավարների նկատմամբ տուգանքի նշանակումը
33. Բանկի կողմից ՀՀ կենտրոնական բանկում թղթակցային հաշվի բացումը
34. Բանկերի կողմից պարբերաբար հրապարակվող տեղեկությունները
35. Գույքահարկով հարկվող օբյեկտները բանկերում
36. Բանկի անվճարունակության հիմքերը
37. Բանկի ժամանակավոր ադմինիստրացիան
38. Բանկի ֆինանսական առողջացման ծրագիրը
39. Սնանկ ճանաչված բանկի լուծարման ընթացակարգը
40. Լուծարվող բանկի պահանջների բավարարման հերթականությունը
41. Գրավի իրացումից հետո պահանջների բավարարման հերթականությունը
42. Ընթացիկ հաշվի գործարքների իրականացումը
43. Վարկերի և տոկոսների մարման հերթականությունը
44. Վարկերի ու դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների պահուստի ձևավորման կարգը
45. Վարկերի ու դեբիտորական պարտքերի պահուստի օգտագործման կարգը
46. Ինվեստիցիոն արժեթղթերում ներդրումների հնարավոր կորուստների պահուստի ձևավորման և օգտագործման կարգը
47. Բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների հրապարակումը
48. Բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների տրամադրումը
49. «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի պահանջների խախտման համար պատասխանատվությունը
50. Բաց բաժնետիրական բանկի մասնակիցների և արտոնյալ բաժնետոմսերի թիվը

51. Արժեթղթերի տեսակները՝ համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի
52. Բանկի շահութաբերության ցուցանիշները
53. Դրամավարկային քաղաքականության տեսակները, նպատակը և գործիքները
54. Ազգային հաշիվների համակարգը
55. Սպառողական գների ինդեքս
56. Պարտատոմսերի եկամտաբերությունը և եկամտաբերության կորը. դյուրացիա
57. Ածանցյալ գործիքներ
58. Ֆինանսական գործակիցներ
59. Եկամուտ և ծախս համարվող տարրերը՝ ըստ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի

Հ Ա Ր Ց Ա Շ Ա Ր

ԲԱՆԿԻ ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ, ՏԵՂԱԿԱԼԻ ԵՎ ԱՆԴԱՄՆԵՐԻ, ՆԵՐՔԻՆ ՀՍԿՈՂ ԽՄԲԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ՏԵՍՏԻ

1. Բանկային գործունեության բնորոշումը
2. Բանկային ավանդ համարվող հաշիվները
3. Բանկի մասնակիցները
4. Փոխկապակցված անձինք
5. Բանկի տարածքային ստորաբաժանումները
6. Բանկի տարածքային ստորաբաժանումների կողմից իրականացվող գործառնությունները
7. Բանկի կանոնադրական հիմնադրամի համալրումը
8. Բանկի կանոնադրական հիմնադրամում նշանակալից մասնակցության ձեռքբերումը և սահմանափակումները
9. Բանկի կառավարման մարմինները
10. Վերստուգիչ հանձնաժողովը, կազմը, իրավասությունները, գործառույթները
11. Բանկի ներքին հսկողությունը
12. Բանկի ղեկավարները
13. Բանկի կանոնադրությանը ծանոթանալու հնարավորության ընձեռումը
14. Բանկի կանոնադրության փոփոխությունների գրանցումը
15. Բանկի ներդրումային գործունեությունը և սահմանափակումները
16. Բանկի բաժանորդագրական գործունեությունը
17. Բանկի կողմից իր բաժնետոմսերը գնելը կամ ձեռք բերելը
18. Բանկի կողմից արժեթղթերով գործառնություններ իրականացնելու իրավական հիմքերը
19. Բանկի և հաճախորդի փոխհարաբերությունները
20. Բանկային գործունեության սահմանափակումները
21. Բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները
22. Բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվների սահմանաչափերը
23. Բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվների հաշվարկման կարգը
24. Բանկի ընդհանուր կապիտալի տարրերը
25. Արտարժութային դիրքի տեսակները
26. Ակտիվների դասակարգումն ըստ ռիսկի
27. Ակտիվների դասակարգումն ըստ իրացվելիության
28. Հատուկ տնտեսական նորմատիվներ
29. Օրենսդրության խախտումները
30. Օրենսդրության խախտումների համար կիրառվող պատժամիջոցները
31. Տույժի կիրառման հիմքը և առավելագույն չափը
32. Բանկի ղեկավարների նկատմամբ տուգանքի նշանակումը
33. Բանկի կողմից ՀՀ կենտրոնական բանկում թղթակցային հաշվի բացումը
34. Բանկերի կողմից պարբերաբար հրապարակվող տեղեկությունները
35. Շահառու հասկացության սահմանումը
36. Բանկերում գույքահարկով հարկվող օբյեկտները
37. Բանկի անվճարունակության հիմքերը
38. Բանկի ժամանակավոր ադմինիստրացիան
39. Բանկի ֆինանսական առողջացման ծրագիրը
40. Սնանկ ճանաչված բանկի լուծարման ընթացակարգը

41. Լուծարվող բանկի պահանջների բավարարման հերթականությունը
42. Գրավի իրացումից հետո պահանջների բավարարման հերթականությունը
43. Ընթացիկ հաշվի գործարքները
44. Վարկերի և տոկոսների մարման հերթականությունը
45. Վարկերի ու դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների պահուստի ձևավորման և օգտագործման կարգը
46. Ինվեստիցիոն արժեթղթերում ներդրումների հնարավոր կորուստների պահուստի ձևավորման և օգտագործման կարգը
47. Բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների հրապարակումը
48. Բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների տրամադրումը
49. «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի պահանջների խախտման համար պատասխանատվությունը
50. Բաց բաժնետիրական բանկի մասնակիցների և արտոնյալ բաժնետոմսերի թիվը
51. Արժեթղթերի տեսակները՝ համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի
52. Բանկի շահութաբերության ցուցանիշները
53. Պարտատոմսերի եկամտաբերությունը և եկամտաբերության կորը. դյուրացիա
54. Ածանցյալ գործիքներ
55. Ֆինանսական գործակիցներ
56. Եկամուտ և ծախս համարվող տարրերը՝ ըստ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի
57. Բանկերի ակտիվային և պասիվային գործառնությունները
58. Հաշվեգրված տոկոսների և տույժերի դուրսգրումը
59. Ֆինանսական հաշվետվությունները և դրանց տարրերը
60. Ֆինանսական հաշվետվությունների տարրերի ճանաչումը
61. Ակտիվների և պարտավորությունների գնահատումը
62. Հաշվապահական հաշվառման վարման հիմնական կանոնները
63. Ակտիվների և պարտավորությունների գույքագրումը
64. Բանկերի հաշվային պլանում նոր հաշիվների բացման կարգը
65. Բանկերի կողմից իրականացվող գործառնությունների հաշվապահական ձևակերպումներ
66. ՀՀ հաշվապահական հաշվառման ստանդարտներ

Հ Ա Ր Ց Ա Շ Ա Ր

ԲԱՆԿԻ, ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԲԱՆԿԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՇՎԱՊԱՀԻ, ԲԱՆԿԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՇՎԱՊԱՀԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ՏԵՍՏԻ

1. Բանկային գործունեության բնորոշումը
2. Բանկային ավանդ համարվող հաշիվները
3. Բանկի մասնակիցները
4. Փոխկապակցված անձինք
5. Բանկի տարածքային ստորաբաժանումները
6. Բանկի տարածքային ստորաբաժանումների կողմից իրականացվող գործառնությունները
7. Բանկի կանոնադրական հիմնադրամի համալրումը
8. Բանկի կանոնադրական հիմնադրամում նշանակալից մասնակցության ձեռքբերումը և սահմանափակումները
9. Բանկի կառավարման մարմինները
10. Վերստուգիչ հանձնաժողովը, կազմը, իրավասությունները, գործառույթները
11. Բանկի ներքին հսկողությունը
12. Բանկի ղեկավարները
13. Բանկի կանոնադրությանը ծանոթանալու հնարավորության ընձեռումը
14. Բանկի կանոնադրության փոփոխությունների գրանցումը
15. Բանկի ներդրումային գործունեությունը և սահմանափակումները
16. Բանկի բաժանորդագրական գործունեությունը
17. Բանկի կողմից իր բաժնետոմսերը գնելը կամ ձեռք բերելը
18. Բանկի կողմից արժեթղթերով գործառնություններ իրականացնելու իրավական հիմքերը
19. Բանկի և հաճախորդի փոխհարաբերությունները
20. Բանկային գործունեության սահմանափակումները

21. Բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները
22. Բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվների սահմանաչափերը
23. Բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվների հաշվարկման կարգը
24. Բանկի ընդհանուր կապիտալի տարրերը
25. Արտարժութային դիրքի տեսակները
26. Ակտիվների դասակարգումն ըստ ռիսկի
27. Ակտիվների դասակարգումն ըստ իրացվելիության
28. Հատուկ տնտեսական նորմատիվները
29. Օրենսդրության խախտումները
30. Օրենսդրության խախտումների համար կիրառվող պատժամիջոցները
31. Տույժի կիրառման հիմքը և առավելագույն չափը
32. Բանկի ղեկավարների նկատմամբ տուգանքի նշանակումը
33. Բանկի կողմից ՀՀ կենտրոնական բանկում թղթակցային հաշվի բացումը
34. Բանկերի կողմից պարբերաբար հրապարակվող տեղեկությունները
35. Շահառու հասկացության սահմանումը
36. Բանկերում գույքահարկով հարկվող օբյեկտները
37. Բանկի անվճարունակության հիմքերը
38. Բանկի ժամանակավոր ադմինիստրացիան
39. Բանկի ֆինանսական առողջացման ծրագիրը
40. Սնանկ ճանաչված բանկի լուծարման ընթացակարգը
41. Լուծարվող բանկի պահանջների բավարարման հերթականությունը
42. Գրավի իրացումից հետո պահանջների բավարարման հերթականությունը
43. Ընթացիկ հաշվի գործարքները
44. Վարկերի և տոկոսների մարման հերթականությունը
45. Վարկերի ու դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների պահուստի ձևավորման և օգտագործման կարգը
46. Ինվեստիցիոն արժեթղթերում ներդրումների հնարավոր կորուստների պահուստի ձևավորման և օգտագործման կարգը
47. Բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների հրապարակումը
48. Բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների տրամադրումը
49. «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի պահանջների խախտման համար պատասխանատվությունը
50. Բաց բաժնետիրական բանկի մասնակիցների և արտոնյալ բաժնետոմսերի թիվը
51. Արժեթղթերի տեսակները՝ համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի
52. Բանկի շահութաբերության ցուցանիշները
53. Պարտատոմսերի եկամտաբերությունը և եկամտաբերության կորը. դյուրացիա
54. Ածանցյալ գործիքներ
55. Ֆինանսական գործակիցներ
56. Եկամուտ և ծախս համարվող տարրերը՝ ըստ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի
57. Բանկերի ակտիվային և պասիվային գործառնությունները
58. Հաշվեգրված տոկոսների և տույժերի դուրսգրումը
59. Ֆինանսական հաշվետվությունները և դրանց տարրերը
60. Ֆինանսական հաշվետվությունների տարրերի ճանաչումը
61. Ակտիվների և պարտավորությունների գնահատումը
62. Հաշվապահական հաշվառման վարման հիմնական կանոնները
63. Ակտիվների և պարտավորությունների գույքագրումը
64. Բանկերի հաշվային պլանում նոր հաշիվների բացման կարգը
65. Բանկի կողմից իրականացվող գործառնությունների հաշվապահական ձևակերպումները
66. ՀՀ հաշվապահական հաշվառման ստանդարտները

Հավելված 2
Հաստատված է
ՀՀ կենտրոնական բանկի նախագահի
2003 թվականի հուլիսի 2-ի թիվ 1/236Ա որոշմամբ

ԲԱՆԿԻ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻ (ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ), ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱԴՄԻՆԻՍՏՐԱՑԻԱՅԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԲԱՆԱՎՈՐ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՆԵՐԻ

Ց Ա Ն Կ

1. Բանկային գործունեության իրավական կարգավորումը
2. Բանկը՝ որպես առանձնահատուկ տնտեսավարող սուբյեկտ
3. Բանկերի կազմակերպաիրավական տեսակները
4. Բանկի կառավարման մարմինները
5. Բանկերի տարածքային ստորաբաժանումները
6. Բանկային գործունեություն և ֆինանսական գործառնություններ
7. Բանկի կանոնադրական հիմնադրամի համալրումը
8. Վերահսկողությունը բանկերի գործունեության նկատմամբ
9. Բանկային գործունեության լիցենզավորման փուլերը
10. Ներդրումային և բաժանորդագրական գործունեությունը
11. Բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները
12. Բանկի կապիտալի համարժեքության նորմատիվները
13. Բանկի իրացվելիության նորմատիվները
14. Բանկի վարկային ռիսկը սահմանափակող նորմատիվները
15. Բանկի արտարժութային ռիսկը սահմանափակող նորմատիվները
16. Պարտադիր պահուստավորման նորմատիվը
17. Դրամավարկային քաղաքականության գործիքները
18. Դրամավարկային քաղաքականության ծրագրի մշակումը և հրապարակումը
19. Բանկի աուդիտային ստուգումը
20. Օրենսդրության խախտումները
21. Օրենսդրության խախտումների համար կիրառվող պատժամիջոցները
22. Բանկի և բանկի ղեկավարների նկատմամբ տուգանքի կիրառման հիմքերը
23. Բանկի ղեկավարներին որակավորման վկայականից զրկելը
24. Լիցենզիայի ուժը կորցրած ճանաչելու և լիցենզիայի անվավեր ճանաչելու հիմքերը
25. Բանկերի միացումը, միացման իրավական հետևանքները
26. Բանկերի լուծարումը՝ համաձայն «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի
27. Բանկային ռիսկերի տեսակները և կառավարումը
28. Վարկային ռիսկի գնահատումը
29. Տոկոսային ռիսկի գնահատումը
30. Անվճարունակության ռիսկի գնահատումը
31. Ֆակտորինգային գործառնությունները և դրանց իրականացման կանոնները
32. Ֆինանսական վարձակալությունը (լիզինգ) և դրա իրականացման կանոնները
33. Հավատարմագրային (լիազորագրային) գործառնությունները և իրականացման կանոնները
34. Վարկավորման գործընթացի կազմակերպումը
35. Վարկային գիծ
36. Գործառնություններ պլաստիկ քարտերով
37. Վարկերի ու դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների պահուստի ձևավորման և օգտագործման կարգը
38. Բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների հրապարակումը և տրամադրումը
39. Բանկերի կողմից վճարվող հարկատեսակները և դրանց դրույքաչափերը
40. Հարկատուի պատասխանատվությունը հարկային օրենսդրության խախտման համար
41. ԱԱՀ արտոնությունները բանկերի համար
42. Բանկի շահութաբերության ցուցանիշները
43. Արժեթղթերի դասակարգումը՝ ըստ «ՀՀ քաղաքացիական օրենսգրքի»
44. Բաց բաժնետիրական ընկերության կողմից թողարկվող արժեթղթերի տեսակները

ԲԱՆԿԻ, ԲԱՆԿԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ, ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԲԱՆԿԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՇՎԱՊԱՀԻ, ԲԱՆԿԻ ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ, ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼԻ ԵՎ ԱՆԴԱՄՆԵՐԻ, ՆԵՐՔԻՆ ՀՍԿՈՂ ԽՄԲԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԲԱՆԱՎՈՐ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՆԵՐԻ

ՑԱՆԿ

1. Բանկերի միջոցների գոյացման աղբյուրները և դրանց տեղաբաշխման ուղղությունները
2. Ֆինանսական հաշվետվությունները և դրանց տարրերը
3. Ֆինանսական հաշվետվությունների տարրերի ճանաչումը
4. Ակտիվների և պարտավորությունների գնահատումը
5. Հաշվապահական հաշվառում վարելու և ֆինանսական հաշվետվություններ կազմելու սկզբունքները
6. Գլխավոր հաշվապահի իրավունքները և պարտականությունները
7. Բանկի ակտիվային գործառնությունները և դրանց նկարագիրը
8. Բանկի պասիվային գործառնությունները և դրանց նկարագիրը
9. Ակտիվների և պարտավորությունների գույքագրումը
10. Ֆինանսական հաշվետվությունների կազմը
11. Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունները
12. Ակտիվների դասակարգումն ըստ ռիսկի
13. Ակտիվների դասակարգումն ըստ իրացվելիության
14. Սկզբնական հաշվապահական հաշվառման փաստաթղթերը
15. Հաշվապահական հաշվառման գրանցամատյանները
16. Հաշվապահական տեղեկատվության գաղտնիությունը և փաստաթղթերի պահպանումը
17. Ֆինանսական հաշվետվություններ կազմելուն ներկայացվող պահանջները
18. Հիմնական միջոցների և մաշվածության հաշվառումը
19. Բանկի եկամուտների և ծախսերի կազմը
20. Բանկի շահութաբերության ցուցանիշները
21. Շահութահարկի հաշվարկման ընդհանուր հիմքերը և դրույքաչափերը
22. Բանկերի կողմից վճարվող հարկատեսակները և դրանց դրույքաչափերը
23. ԱԱՀ արտոնությունները բանկերի համար
24. Հարկատուի պատասխանատվությունը հարկային օրենսդրության խախտման համար
25. Բանկային օրենսդրության խախտումները
26. Բանկային օրենսդրության խախտումների համար կիրառվող պատժամիջոցները
27. Բանկի և բանկի ղեկավարների նկատմամբ տուգանքի կիրառման հիմքերը
28. Բանկի ղեկավարներին որակավորման վկայականից զրկելը
29. Լիցենզիայի ուժը կորցրած և անվավեր ճանաչելու հիմքերը
30. Բանկային ռիսկերի դասակարգումը և գնահատումը
31. Բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները
32. Բանկի կապիտալի համարժեքության նորմատիվները
33. Բանկի իրացվելիության նորմատիվները
34. Բանկի գործունեության գնահատման ամփոփ ցուցանիշները
35. Վարկերի և դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների պահուստների ձևավորման և օգտագործման կարգը
36. Ինվեստիցիոն արժեթղթերում ներդրումների հնարավոր կորուստների պահուստի ձևավորման և օգտագործման կարգը
37. Բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների հրապարակումը և տրամադրումը
38. Բանկերի աուդիտային ստուգումը
39. Վերստուգիչ հանձնաժողովի իրավասությունները
40. Վճարման հանձնարարականի վավերությունը
41. Վճարման հանձնարարականն ակցեպտավորելը
42. Վճարման հանձնարարականի մերժելը
43. Վճարման հանձնարարականը չեղյալ համարելը
44. Շահառուին վճարելու և տեղեկացնելու՝ շահառուի բանկի պարտավորությունը
45. Բանկերի միջև կատարվող փոխանցումների կատարման առավելագույն ժամկետները
46. Հաշվապահական ձևակերպումներ
47. ՀՀ հաշվապահական հաշվառման ստանդարտներ

ԲԱՆԿԻ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻ ՏԵՂԱԿԱԼԻ, ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄԻ, ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿԱՌԱՎԱՐՉԻ, ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԲԱՆԿԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿԱՌԱՎԱՐՉԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԲԱՆԱՎՈՐ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՆԵՐԻ

Ց Ա Ն Կ

1. Բանկերի տարածքային ստորաբաժանումների կողմից իրականացվող գործառնությունները
2. Բանկի կառավարման մարմինները
3. Բանկի ղեկավարները
4. Բանկի վերստուգիչ հանձնաժողովի իրավասությունները
5. Բանկերի կողմից իրականացվող ֆինանսական գործառնությունները
6. Բանկերի ներդրումային գործունեությունը
7. Բանկերի բաժանորդագրական գործունեությունը
8. Ֆինանսական վարձակալության (լիզինգ) իրականացման կանոնները
9. Ֆակտորինգի իրականացման կանոնները
10. Հավատարմագրային (լիազորագրային) գործառնության իրականացման կանոնները
11. Արժեթղթերի դասակարգումը
12. Բանկի հետ կապված անձանց գործարքները
13. Բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները
14. Բանկի ընդհանուր կապիտալը
15. Երկարաժամկետ ստորադաս փոխառություններ
16. Կապիտալի համարժեքության նորմատիվները
17. Իրացվելիության նորմատիվները
18. Ակտիվների դասակարգումն ըստ ռիսկի
19. Ակտիվների դասակարգումն ըստ իրացվելիության
20. Մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափը
21. Բանկի հետ կապված անձանց գծով ռիսկի առավելագույն չափը
22. Արտարժույթի տնօրինման նորմատիվը
23. Արտարժութային դիրքի տեսակները
24. Կենտրոնական բանկում տեղաբաշխվող պարտադիր պահուստների նվազագույն չափը
25. Վարկերի և դեբիտորական պարտքերի դասակարգման և հնարավոր կորուստների պահուստի ձևավորման կարգը
26. Հաճախորդի վճարունակության գնահատումը
27. Բանկային ռիսկերի դասակարգումը և գնահատումը
28. Վարկային ռիսկի գնահատումը
29. Արտարժութային ռիսկի գնահատումը
30. Տոկոսային ռիսկի գնահատումը
31. Անվճարունակության ռիսկի գնահատումը
32. Բանկերի գործունեության գնահատման ամփոփ ցուցանիշները
33. Բանկի շահութաբերության ցուցանիշները
34. Բանկերի կողմից վճարվող հարկատեսակները և դրույքաչափերը
35. Բանկերի աուդիտային ստուգումը
36. Արժութային կարգավորումը և արժութային վերահսկողությունը ՀՀ-ում
37. Բանկային օրենսդրության խախտումները
38. Բանկային օրենսդրության խախտումների համար կիրառվող պատժամիջոցները
39. Բանկի և բանկի ղեկավարների նկատմամբ տուգանքի կիրառման հիմքերը
40. Բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների հրապարակումը և տրամադրումը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՈՐՈՇՈՒՄԸ

ՀՀ կենտրոնական բանկի կողմից բանկերի հետ լոմբարդային վարկերի տրամադրման, ավանդների ներգրավման, ռեպո և հակադարձ ռեպո, պետական արժեթղթերի առքի ու վաճառքի գործարքների կնքման հայտերի ներկայացման, դրանց ամփոփման և արդյունքների հայտարարման կարգը» հաստատելու վերաբերյալ

Հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի դրույթները, «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 9-րդ և 10-րդ հոդվածները, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ մասը, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի դրույթներով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահը որոշում է.

1. Հաստատել «ՀՀ կենտրոնական բանկի կողմից բանկերի հետ լոմբարդային վարկերի տրամադրման, ավանդների ներգրավման, ռեպո և հակադարձ ռեպո, պետական արժեթղթերի առքի ու վաճառքի գործարքների կնքման հայտերի ներկայացման, դրանց ամփոփման և արդյունքների հայտարարման կարգը» համաձայն հավելվածի (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Տ. ՍԱՐԳՍՅԱՆ
4 հուլիսի 2003 թ., N 1/246Լ

ԿԱՐԳ

ՀՀ կենտրոնական բանկի կողմից բանկերի հետ լոմբարդային վարկերի տրամադրման, ավանդների ներգրավման, ռեպո և հակադարձ ռեպո, պետական արժեթղթերի առքի ու վաճառքի գործարքների կնքման հայտերի ներկայացման, դրանց ամփոփման և արդյունքների հայտարարման

1. Սույն կարգը սահմանում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից լոմբարդային վարկերի տրամադրման, ավանդների ներգրավման, ռեպո և հակադարձ ռեպո, պետական կարճաժամկետ պարտատոմսերի առքի կամ վաճառքի գործարքների (այսուհետև՝ գործարք) կնքման հայտերի ներկայացման, դրանց ամփոփման և արդյունքների հայտարարման հետ կապված իրավահարաբերությունները:

2. Ռեպո և հակադարձ ռեպո գործարքները, որպես կանոն, կնքվում են յուրաքանչյուր շաբաթվա չորեքշաբթի օրը: Ընդ որում, գործարքի կնքման օրը ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ կարող է հետաձգվել՝ գործարքի կնքումից մեկ օր (առնվազն 20 ժամ) առաջ զանգվածային լրատվության և (կամ) կապի միջոցներով տեղեկացնելով ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին (այսուհետև՝ բանկեր):

3. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի կողմից սահմանված գործարքների տոկոսադրույքները, ուղղությունը և ժամկետայնությունը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ֆինանսական շուկաներում գործառնությունների վարչության կողմից հայտարարվում է գործարքի կնքման պահից 17 ժամ առաջ՝ բացառությամբ ճշգրտման գործիքների: Հայտարարությունը տրվում է «Սի Բի էյ նեթ» միջբանկային համակարգչային ցանցի միջոցով:

3.1. Ճշգրտման գործիքները կնքվում են արագ տենդերի միջոցով՝ գործարքի կնքման պահից 1 ժամ առաջ տոկոսադրույքի և ժամկետայնության հայտարարմամբ՝ «Սի Բի էյ նեթ» միջբանկային համակարգչային ցանցի միջոցով: Արագ տենդերի միջոցով ռեպո գործարքների կնքումը կարող է կիրառվել ցանկացած պահի:

4. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հետ գործարք կնքելու համար բանկերը ներկայացնում են համապատասխան հայտ՝ գործարքի կնքման օրը ժամը 10:00-ից 12:00-ն՝ բացառությամբ լոմբարդային վարկերի և ավանդային գործարքների, որոնց կնքման համար հայտերը բանկերը

կարող են ներկայացնել մինչև ժամը 15.00-ն: Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ֆինանսական շուկաներում գործառնությունների վարչությունը ներկայացված հայտերն ամփոփում է և դրանց բավարարվելու (մասնակի բավարարվելու) կամ մերժվելու մասին բանկերին տեղեկացնում մինչև գործարքի կնքման օրվա ժամը 14:30-ը՝ բացառությամբ լոմբարդային վարկերի և ավանդային գործարքների կնքման հայտերի, որոնց վերաբերյալ համապատասխան տեղեկատվություն տրամադրվում է մինչև ժամը 15:30-ը:

4.1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ֆինանսական շուկաներում գործառնությունների վարչությունն արագ տենդերի միջոցով իրականացվող գործարքի հայտերը կնքման պահից 1 ժամ հետո, իսկ ժամը 15.00-ից հետո կնքված գործարքների համար՝ ոչ ուշ, քան տվյալ գործառնական օրվա ավարտին ամփոփում և բանկերին տեղեկացնում է հայտի հաստատման (մասնակի բավարարմամբ հաստատման) կամ մերժման մասին:

5. Ռեպո, հակադարձ ռեպո և պետական կարճաժամկետ պարտատոմսերի առքի կամ վաճառքի գործարքների կնքման հայտերի հաստատման (մասնակի բավարարմամբ հաստատման) դեպքում դրամական փոխանցումները և արժեթղթերի հաշվեգրումները կատարվում են մինչև գործարքի կնքման օրվա գործառնական օրվա ավարտը:

6. Լոմբարդային վարկերի և ավանդային գործարքների կնքման հայտերի հաստատման դեպքում դրամական փոխանցումները և արժեթղթերի կամ այլ գրավականների հաշվեգրումները կամ գրավադրումը կատարվում են մինչև գործարքի կնքման օրվա գործառնական օրվա ավարտը:

7. Գործարքի կնքման արդյունքների մասին Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից տրվում է հայտարարություն.

ա) «Սի Բի էյ նեթ» միջբանկային համակարգչային ցանցի միջոցով՝ գործարքի կնքման օրվա ժամը 16:00-ին:

բ) Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ինտերնետային «տնային էջում»՝ գործարքի կնքման օրվա ժամը 16:00-ին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՈՐՈՇՈՒՄԸ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի հետ արտարժույթի առք ու վաճառքի, արժութային սվոփ, արտարժույթի կանխիկացման և ապականխիկացման գործառնությունների կնքման գլխավոր համաձայնագրի մասին

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 48-րդ, 49-րդ և 51-րդ հոդվածները, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահը որոշում է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի հետ արտարժույթի առք ու վաճառքի, արժութային սվոփ, արտարժույթի կանխիկացման և ապականխիկացման գործառնությունների կնքման գլխավոր համաձայնագիրը՝ համաձայն հավելված 1-ի (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Տ. ՍԱՐԳՍՅԱՆ
14 հուլիսի 2003 թ., N 1/250 L

Հավելված 1

Հաստատված է
ՀՀ կենտրոնական բանկի նախագահի
2003 թվականի հուլիսի 14-ի թիվ 1/250Լ որոշմամբ

ԱՐՏԱՐԺՈՒՅԹԻ ԱՌՔ ՈՒ ՎԱՃԱՌՔԻ, ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ՍՎՈՓ, ԱՐՏԱՐԺՈՒՅԹԻ ԿԱՆԽԻԿԱՑՄԱՆ ԵՎ ԱՊԱԿԱՆԽԻԿԱՑՄԱՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՆՔՄԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Թիվ _____
ք. Երևան *«__ » _____ 2003 թ.*

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը (այսուհետև՝ Կենտրոնական բանկ), գործելով համաձայն «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, ի դեմս Կենտրոնական բանկի նախագահ Տ. Սարգսյանի՝ մի կողմից, և _____ բանկը (այսուհետև՝ Բանկ), գործելով համաձայն Բանկի կանոնադրության, ի դեմս տնօրեն (վարչության նախագահ)_____՝ մյուս կողմից (այսուհետև՝ Կողմեր), կնքեցին սույն գլխավոր համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

Կողմերը Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի, այլ իրավական ակտերի և սույն համաձայնագրի շրջանակներում ՀՀ ներքին արժութային շուկայում կնքում են արտարժույթի առքի և վաճառքի գործարքներ, արժութային սվոփ գործարքներ և իրականացնում արտարժույթի կանխիկացման և ապականխիկացման գործարքներ:

2. Ընդհանուր դրույթներ

Սույն համաձայնագրի իմաստով՝

Կենտրոնական բանկ՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ.

Բանկ՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող առևտրային բանկ.

Արտարժույթ՝ «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 4-րդ կետով սահմանված միջոցները.

Արտարժույթի կանխիկացում՝ Բանկի կողմից ներկայացված Հայտի հիման վրա Կենտրոնական բանկի կողմից անկանխիկ Արտարժույթի դիմաց կանխիկ Արտարժույթի տրամադրումը Բանկին.

Արտարժույթի ապականխիկացում՝ Բանկի կողմից ներկայացված Հայտի հիման վրա Կենտրոնական բանկի կողմից կանխիկ Արտարժույթի դիմաց անկանխիկ Արտարժույթի տրամադրումը Բանկին.

Արժութային սվոփ՝ Բանկի կողմից ներկայացված Հայտի հիման վրա հաջորդական երկու գործարքների իրականացում. Բանկի և Կենտրոնական բանկի միջև ՀՀ դրամի և անկանխիկ Արտարժույթի փոխանակում՝ որոշ ժամանակ անց նշված արժույթները միևնույն ծավալներով հետ փոխանակելու և դրամի դիմաց Սվոփ տոկոսադրույքին համապատասխան գումար վճարելու պայմանով.

Սվոփ տոկոսադրույք՝ Կենտրոնական բանկի կողմից Արժութային սվոփ Գործարքի վերաբերյալ հայտարարությունում նշված Սվոփ տոկոսադրույք.

Արտարժույթի տրամադրման սվոփ՝ Արժութային սվոփ, որի ժամանակ Գործարքի առաջին քայլի ընթացքում Բանկը Կենտրոնական Բանկին տրամադրում է անկանխիկ Արտարժույթ և Կենտրոնական բանկից ներգրավում ՀՀ դրամ, իսկ երկրորդ քայլի ընթացքում նշված միջոցները միևնույն ծավալներով հետ են փոխանակվում, և Բանկը Կենտրոնական բանկին վճարում է Սվոփ տոկոսադրույքին համապատասխան դրամային գումար.

Արտարժույթի ներգրավման սվոփ՝ Արժութային սվոփ, որի ժամանակ Գործարքի առաջին քայլի ընթացքում Բանկը Կենտրոնական Բանկից ներգրավում է անկանխիկ Արտարժույթ և Կենտրոնական բանկին տրամադրում ՀՀ դրամ, իսկ երկրորդ քայլի ընթացքում նշված միջոցները միևնույն ծավալներով հետ են փոխանակվում, և Կենտրոնական բանկը Բանկին վճարում է Սվոփ տոկոսադրույքին համապատասխան դրամային գումար.

Հայտ՝ Բանկի կողմից Կենտրոնական բանկ ներկայացված Արտարժույթի առքի կամ վաճառքի, Արտարժույթի տրամադրման կամ ներգրավման սվոփի, Արտարժույթի կանխիկացման կամ ապականխիկացման Գործարք կնքելու առաջարկ (ենթահավելվածներ 1, 2, 3, 4, 5, 6).

Հայտի հաստատում՝ Բանկի կողմից Կենտրոնական բանկ ներկայացված Հայտը Կենտրոնական բանկի կողմից հաստատելու մասին ծանուցում (ենթահավելվածներ 7, 8, 9, 10, 11).

Հայտի մասնակի հաստատում՝ Բանկի կողմից Կենտրոնական բանկ ներկայացված Հայտը Կենտրոնական բանկի կողմից Հայտում նշված գումարի մի մասի չափով հաստատելու մասին ծանուցում (ենթահավելվածներ 7, 8, 9).

Հայտի մերժում՝ Բանկի կողմից Կենտրոնական բանկ ներկայացված Հայտը Կենտրոնական բանկի կողմից մերժվելու մասին ծանուցում (ենթահավելվածներ 12, 13, 14).

Գործարք՝ Կենտրոնական բանկի և Բանկի միջև սույն համաձայնագրի շրջանակներում կնքված Արտարժույթի առքի կամ վաճառքի, Արտարժույթի տրամադրման կամ ներգրավման սվոփի, Արտարժույթի կանխիկացման կամ ապականխիկացման գործարք.

Գործարքի կնքման օր՝ այն օրը, երբ Կենտրոնական բանկը հաստատում (մասնակի հաստատում) է Բանկի կողմից ներկայացված Հայտը.

Կատարման օր՝ Գործարքի պայմաններով սահմանված ստանձնած պարտավորությունների իրականացման, այսինքն՝ անկանխիկ ֆինանսական միջոցները գործընկերոջ հաշվին մուտքագրելու, կամ կանխիկ միջոցները Կենտրոնական բանկի դրամարկղ մուտքագրելու կամ Կենտրոնական բանկի դրամարկղից տրամադրելու օր.

Գործարքի ծավալ՝ Գործարքի հիմքում ընկած Արտարժույթի միավորների թիվը.

Գործարքի դրամային համարժեք՝ Գործարքի ծավալի և Գործարքի փոխարժեքի արտադրյալ.

Աշխատանքային օր՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված տոնի կամ հիշատակի ոչ աշխատանքային օր, ինչպես նաև շաբաթ կամ կիրակի չհանդիսացող ցանկացած օրացուցային օր.

Բանկային օր՝ Կենտրոնական բանկի աշխատանքային օրվա ժամը 10:00-ից մինչև ժամը 15:00-ն:

3. Արտարժույթի առք ու վաճառքի գործարքների և հաշվարկների իրականացման կարգը

3.1. Բանկը Կենտրոնական բանկի հայտարարության հիման վրա Կենտրոնական բանկին առաջարկում է Գործարքի պայմանները՝ Հայտի միջոցով:

3.2. Բանկը Գործարքի կնքման Հայտը Կենտրոնական բանկ է ներկայացնում Կենտրոնական բանկի հայտարարության մեջ նշված ժամկետում:

3.3. Հայտերը կարող են ներկայացվել թղթային եղանակով (երկու օրինակից) կամ CBANet համակարգչային ցանցի միջոցով:

3.4. Կենտրոնական բանկը Բանկի կողմից ներկայացված Հայտը պարտավոր է հաստատել կամ մերժել Հայտերի ընդունման համար սահմանված ժամկետից հետո 2 ժամվա ընթացքում:

3.5. Սույն համաձայնագրով Կենտրոնական բանկին իրավունք է վերապահվում միակողմանիորեն մերժել Բանկի կողմից ներկայացված Հայտը կամ բավարարել մասնակիորեն (Հայտի մասնակի հաստատում): Հայտարարության մեջ նշված ժամկետից ուշ կամ սահմանված ձևից շեղումներով ներկայացված Հայտերը մերժվում են:

3.6. Բանկի կողմից Կենտրոնական բանկին առաքված Հայտը չի կարող հետ կանչվել:

3.7. Առանձին դեպքերում Արտարժույթի առքի կամ վաճառքի Գործարքը կարող է կնքվել Կողմերի միջև ուղղակի բանակցությունների արդյունքում: Այս դեպքում բանակցությունների միջոցով սահմանվում են Գործարքի պայմանները, այնուհետև Բանկը համապատասխան առքի կամ վաճառքի Հայտ է ներկայացնում Կենտրոնական բանկ: Բանակցությունների արդյունքում սահմանված Գործարքի պայմանները նշվում են Հայտի մեջ:

3.8. Եթե Բանկը Կենտրոնական բանկից ստանում է Հայտի հաստատումը կամ մասնակի հաստատումը, ապա Գործարքը համարվում է կնքված, և Կողմերը ստանձնում են սույն համաձայնագրով սահմանված իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև կրում են նախատեսված պատասխանատվությունը:

3.9. Կենտրոնական բանկի կողմից Բանկի Հայտը հաստատելու (մասնակի հաստատելու), մերժելու, ինչպես նաև Հայտը և Հայտի հաստատումը ուժը կորցրած ճանաչելու դեպքում Կենտրոնական բանկը նույն օրվա ընթացքում համապատասխան կարգով ծանուցում է Բանկին:

3.10. Թղթային ձևով ներկայացված Հայտերի վրա կատարվում է Հայտը մերժելու կամ հաստատելու (մասնակի հաստատելու) մասին համապատասխան գրառում:

3.11. Կենտրոնական բանկի կողմից անկանխիկ Արտարժույթի առքի դեպքում Բանկը պարտավոր է Գործարքի Կատարման օրվա դրությամբ ապահովել Գործարքի ծավալի չափով Արտարժույթի մուտքագրումը Կենտրոնական բանկի կողմից նշված արտարժութային հաշվին, իսկ կանխիկ Արտարժույթի առքի

դեպքում, մինչև Կատարման օրվա Բանկային օրվա ավարտը, Կենտրոնական բանկի դրամարկղ: Կենտրոնական բանկը պարտավոր է Գործարքի Կատարման օրը, ընդ որում, կանխիկ Արտարժույթի առքի դեպքում, Բանկի կողմից կանխիկ Արտարժույթը Կենտրոնական բանկի դրամարկղ մուտքագրելուց հետո, Գործարքի դրամային համարժեքի չափով դրամը մուտքագրել Կենտրոնական բանկում գտնվող Բանկի թղթակցային հաշվին, եթե Կենտրոնական բանկի կողմից տրված հայտարարության մեջ այլ պայմաններ սահմանված չեն, կամ Կողմերը բանակցությունների արդյունքում այլ պայմանների վերաբերյալ չեն պայմանավորվել: Ընդ որում, բանակցությունների արդյունքում այլ պայմանների սահմանման դեպքում վերջիններս նշվում են Հայտի մեջ:

3.12. Կենտրոնական բանկի կողմից Արտարժույթի վաճառքի դեպքում Կենտրոնական բանկը Գործարքի Կատարման օրը Կենտրոնական բանկում գտնվող Բանկի թղթակցային հաշվից անվիճելի (անակցեպտ) կարգով գանձում է Գործարքի դրամային համարժեքի չափով դրամը: Անկանխիկ Արտարժույթի վաճառքի դեպքում, Կենտրոնական բանկը պարտավոր է Գործարքի Կատարման օրվա դրությամբ ապահովել Գործարքի ծավալի չափով Արտարժույթի մուտքագրումը Բանկի կողմից նշված արտարժութային հաշվին, իսկ կանխիկ Արտարժույթի վաճառքի դեպքում՝ մինչև Կատարման օրվա Բանկային օրվա ավարտը Գործարքի ծավալի չափով Արտարժույթը տրամադրել Բանկին Կենտրոնական բանկի դրամարկղից, եթե Կենտրոնական բանկի կողմից տրված հայտարարության մեջ այլ պայմաններ սահմանված չեն, կամ Կողմերը բանակցությունների արդյունքում այլ պայմանների վերաբերյալ չեն պայմանավորվել: Ընդ որում, բանակցությունների արդյունքում այլ պայմանների սահմանման դեպքում վերջիններս նշվում են Հայտի մեջ:

4. Արժութային սվոփ գործարքների և հաշվարկների իրականացման կարգը

4.1. Բանկը Կենտրոնական բանկի հայտարարության հիման վրա վերջինիս առաջարկում է Գործարքի պայմանները՝ Հայտի միջոցով:

4.2. Բանկը Գործարքի կնքման Հայտը Կենտրոնական բանկ է ներկայացնում Կենտրոնական բանկի հայտարարության մեջ նշված ժամկետում:

4.3. Հայտերը կարող են ներկայացվել թղթային եղանակով (երկու օրինակից) կամ CBANet համակարգչային ցանցի միջոցով:

4.4. Կենտրոնական բանկը Բանկի կողմից ներկայացված Հայտը պարտավոր է հաստատել կամ մերժել Հայտերի ընդունման համար սահմանված ժամկետից հետո 2 ժամվա ընթացքում:

4.5. Սույն համաձայնագրով Կենտրոնական բանկին իրավունք է վերապահվում միակողմանիորեն մերժել Բանկի կողմից ներկայացված Հայտը կամ բավարարել մասնակիորեն (Հայտի մասնակի հաստատում): Հայտարարության մեջ նշված ժամկետից ուշ կամ սահմանված ձևից շեղումներով ներկայացված Հայտերը մերժվում են:

4.6. Բանկի կողմից Կենտրոնական բանկին առաքված Հայտը չի կարող հետ կանչվել:

4.7. Եթե Բանկը Կենտրոնական բանկից ստանում է Հայտի հաստատումը կամ մասնակի հաստատումը, ապա Գործարքը համարվում է կնքված, և Կողմերը ստանձնում են սույն համաձայնագրով սահմանված իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև կրում են նախատեսված պատասխանատվությունը:

4.8. Կենտրոնական բանկի կողմից Բանկի Հայտը հաստատելու (մասնակի հաստատելու), մերժելու, ինչպես նաև Հայտը և Հայտի հաստատումը ուժը կորցրած ճանաչելու դեպքում Կենտրոնական բանկը նույն օրվա ընթացքում համապատասխան կարգով ծանուցում է Բանկին:

4.9. Թղթային ձևով ներկայացված Հայտերի վրա կատարվում է Հայտը մերժելու կամ հաստատելու (մասնակի հաստատելու) մասին համապատասխան գրառում:

4.10. Արտարժույթի տրամադրման սվոփի իրականացման դեպքում Բանկը պարտավոր է Գործարքի առաջին քայլի Կատարման օրվա դրությամբ ապահովել Գործարքի ծավալի չափով Արտարժույթի մուտքագրումը Կենտրոնական բանկի կողմից նշված արտարժութային հաշվին, իսկ Կենտրոնական բանկը պարտավոր է Գործարքի դրամային համարժեքի չափով դրամը Գործարքի առաջին քայլի Կատարման օրը մուտքագրել Կենտրոնական բանկում գտնվող Բանկի թղթակցային հաշվին, եթե Կենտրոնական բանկի կողմից տրված հայտարարության մեջ այլ պայմաններ սահմանված չեն, կամ Կողմերը բանակցությունների արդյունքում այլ պայմանների վերաբերյալ չեն պայմանավորվել: Կենտրոնական բանկը Գործարքի երկրորդ քայլի Կատարման օրվա դրությամբ ապահովում է Գործարքի ծավալի չափով Արտարժույթի մուտքագրումը Բանկի կողմից նշված արտարժութային հաշվին և Կենտրոնական բանկում գտնվող Բանկի թղթակցային հաշվից անվիճելի (անակցեպտ) կարգով գանձում է Գործարքի դրամային համարժեքի չափով դրամը և Սվոփ տոկոսադրույքին համապատասխան գումարը, եթե Կենտրոնական բանկի կողմից տրված հայտարարության մեջ այլ պայմաններ սահմանված չեն, կամ Կողմերը բանակցությունների արդյունքում այլ պայմանների վերաբերյալ չեն պայմանավորվել: Բանակցությունների արդյունքում այլ պայմանների սահմանման դեպքում վերջիններս նշվում են Հայտի մեջ:

4.11. Արտարժույթի ներգրավման սվոփի իրականացման դեպքում Կենտրոնական բանկը Գործարքի առաջին քայլի Կատարման օրվա դրությամբ ապահովում է Գործարքի ծավալի չափով Արտարժույթի մուտքագրումը Բանկի կողմից նշված արտարժութային հաշվին և Կենտրոնական բանկում գտնվող Բանկի թղթակցային հաշվից անվիճելի (անակցեպտ) կարգով գանձում է Գործարքի դրամային համարժեքի չափով դրամը, եթե Կենտրոնական բանկի կողմից տրված հայտարարության մեջ այլ պայմաններ սահմանված չեն, կամ Կողմերը բանակցությունների արդյունքում այլ պայմանների վերաբերյալ չեն պայմանավորվել: Գործարքի երկրորդ քայլի Կատարման օրվա դրությամբ Բանկը պարտավոր է ապահովել Գործարքի ծավալի չափով Արտարժույթի մուտքագրումը Կենտրոնական բանկի կողմից նշված արտարժութային հաշվին, իսկ Կենտրոնական բանկը պարտավոր է Գործարքի դրամային համարժեքի չափով դրամը և Սվոփ տոկոսադրույքին համապատասխան գումարը մուտքագրել Կենտրոնական բանկում գտնվող Բանկի թղթակցային հաշվին, եթե Կենտրոնական բանկի կողմից տրված հայտարարության մեջ այլ պայմաններ սահմանված չեն, կամ Կողմերը բանակցությունների արդյունքում այլ պայմանների վերաբերյալ չեն պայմանավորվել: Բանակցությունների արդյունքում այլ պայմանների սահմանման դեպքում վերջիններս նշվում են Հայտի մեջ:

5. Արտարժույթի կանխիկացման և ապականխիկացման գործարքների և հաշվարկների իրականացման կարգը

5.1. Բանկը Կենտրոնական բանկի հետ Գործարք կնքելու համար բանակցություններ է վարում Գործարքի պայմանների վերաբերյալ, այդ թվում՝ միջնորդավճարի:

5.2. Բանկը Գործարքի պայմանների վերաբերյալ Կենտրոնական բանկի հետ համաձայնության գալու դեպքում Կենտրոնական բանկ է ներկայացնում Գործարքի կնքման Հայտը:

5.3. Հայտերը կարող են ներկայացվել թղթային եղանակով (երկու օրինակից) կամ CBANet համակարգչային ցանցի միջոցով:

5.4. Կենտրոնական բանկը Բանկի կողմից ներկայացված Հայտը պարտավոր է հաստատել կամ մերժել Հայտի ընդունման պահից 30 րոպեի ընթացքում:

5.5. Կենտրոնական բանկին իրավունք չի վերապահվում մերժել Բանկի կողմից Կենտրոնական բանկ ներկայացված Հայտը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ Հայտը սահմանված ձևով չի ներկայացվել կամ ներկայացվել է սխալներով և (կամ) ջնջումներով, կամ մինչև Հայտի առաքումը տվյալ Բանկի հետ սույն հոդվածի 5.1 կետով նախատեսված բանակցություններ չեն վարվել: Բանակցությունների ընթացքում որոշված ժամկետից ուշ կամ սահմանված ձևից շեղումներով ներկայացված Հայտերը մերժվում են:

5.6. Բանկի կողմից Կենտրոնական բանկին առաքված Հայտը չի կարող հետ կանչվել:

5.7. Եթե Բանկը Կենտրոնական բանկից ստանում է Հայտի հաստատումը, ապա Գործարքը համարվում է կնքված, և Կողմերն ստանձնում են սույն համաձայնագրով սահմանված իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև կրում են նախատեսված պատասխանատվությունը:

5.8. Կենտրոնական բանկի կողմից Բանկի Հայտը հաստատելու (մասնակի հաստատելու), մերժելու, ինչպես նաև Հայտը և Հայտի հաստատումը ուժը կորցրած ճանաչելու դեպքում Կենտրոնական բանկը նույն օրվա ընթացքում համապատասխան կարգով ծանուցում է Բանկին:

5.9. Թղթային ձևով ներկայացված Հայտերի վրա կատարվում է Հայտը մերժելու կամ հաստատելու մասին համապատասխան գրառում:

5.10. Արտարժույթի կանխիկացման Գործարք կնքելու դեպքում Բանկը պարտավոր է Գործարքի Կատարման օրվա դրությամբ ապահովել Գործարքի ծավալի չափով անկանխիկ Արտարժույթի մուտքագրումը Կենտրոնական բանկի կողմից նշված արտարժութային հաշվին: Կենտրոնական բանկը անկանխիկ Արտարժույթն իր հաշվին մուտքագրվելու համապատասխան հաստատումը ստանալուց հետո պարտավոր է մինչև հաջորդ Բանկային օրվա ավարտը Կենտրոնական բանկի դրամարկղից Բանկին տրամադրել Գործարքի ծավալի չափով կանխիկ Արտարժույթը:

5.11. Արտարժույթի ապականխիկացման Գործարք կնքելու դեպքում Բանկը պարտավոր է մինչև Գործարքի Կատարման օրվա Բանկային օրվա ավարտը Կենտրոնական բանկի դրամարկղ մուտքագրել Գործարքի ծավալի չափով կանխիկ Արտարժույթը: Կանխիկ Արտարժույթը Կենտրոնական բանկի դրամարկղ մուտքագրվելուց հետո Կենտրոնական բանկը պարտավոր է նույն օրվա ընթացքում Գործարքի ծավալի չափով անկանխիկ Արտարժույթը փոխանցել Բանկի կողմից նշված արտարժութային հաշվին:

5.12. Արտարժույթի կանխիկացման և ապականխիկացման Գործարքի դիմաց Կենտրոնական բանկը Գործարքի Կատարման օրը Կենտրոնական բանկում գտնվող Բանկի թղթակցային հաշվից անվիճելի (անակցեպտ) կարգով գանձում է կամ Բանկի թղթակցային հաշվին մուտքագրում միջնորդավճար բանակցությունների արդյունքում պայմանավորված չափով, ընդ որում, միջնորդավճարը հաշվարկվում է ՀՀ դրամով՝ Կենտրոնական բանկի կողմից Գործարքի կնքման օրվա դրությամբ սահմանված հաշվարկային փոխարժեքով:

5.13. Առանձին դեպքերում Կողմերը բանակցությունների արդյունքում կարող են պայմանավորվել հաշվարկների իրականացման այլ պայմանների վերաբերյալ: Ընդ որում, բանակցությունների արդյունքում այլ պայմանների սահմանման դեպքում վերջիններս նշվում են Հայտի մեջ:

6. Կողմերի պարտավորությունները

6.1. Կողմերը պարտավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրության շրջանակներում ապահովել կնքվող Գործարքների գաղտնիությունը:

6.2. Կողմերը պարտավորվում են սույն համաձայնագրով սահմանված ժամկետներում և պայմաններով կատարել համապատասխան փոխանցումները:

7. Կողմերի պատասխանատվությունը

7.1. Բանկի պատասխանատվությունը.

7.1.1. Այն դեպքում, երբ Բանկը հանդես է գալիս որպես արտարժույթի Գնորդ, սույն համաձայնագրով սահմանված օրվա դրությամբ իր թղթակցային հաշվում Գործարքի դրամային համարժեքի չափով դրամական միջոցների բացակայության դեպքում վճարում է տուժանք՝ Գործարքի դրամային համարժեքի 0.5%-ի չափով, իսկ Հայտը և Հայտի հաստատումը ուժը կորցրած են ճանաչվում:

7.1.2. Այն դեպքում, երբ Բանկը հանդես է գալիս որպես անկանխիկ Արտարժույթ վաճառող, սույն համաձայնագրով սահմանված ժամկետներում արտարժութային գումարների մուտքագրումը Կենտրոնական բանկի կողմից նշված արտարժութային հաշվին չապահովելու կամ անպատշաճ կերպով կատարելու դեպքում վճարում է տուժանք՝ յուրաքանչյուր ուշացած օրացուցային օրվա համար Գործարքի դրամային համարժեքի 0.5%-ի չափով: Սույն ենթակետով նախատեսված տուժանքները հաշվարկվում են Գործարքի Կատարման օրվան հաջորդող օրացուցային օրվանից հաշված առավելագույնը երեք Աշխատանքային օր (բացառությամբ սույն ենթակետի երկրորդ մասով նախատեսված դեպքերի), որից հետո Բանկի կողմից պարտավորությունը չկատարելու պարագայում Հայտը և Հայտի հաստատումը ուժը կորցրած են ճանաչվում, և Կենտրոնական բանկը հետ է գանձում Բանկի թղթակցային հաշվին մուտքագրված դրամական գումարը:

Սույն ենթակետի առաջին մասով նախատեսված հիմքով Հայտը և Հայտի հաստատումը ուժը կորցրած ճանաչվելու օրը Բանկի թղթակցային հաշվում գանձման ենթակա դրամական միջոցների բացակայության կամ մասնակի առկայության դեպքում Կենտրոնական բանկը Բանկի թղթակցային հաշվից գանձում է համապատասխան դրամական միջոցները դրանց առկայության առաջին իսկ պահին, առկա գումարի չափով՝ մինչև գանձման ենթակա գումարի ամբողջական մարումը: Կենտրոնական բանկը Բանկի թղթակցային հաշվից գանձում է նաև տուժանք՝ յուրաքանչյուր օրացուցային օրվա համար բացակայող միջոցների 0.5%-ի չափով՝ մինչև բացակայող միջոցների ամբողջական գանձման օրը (ներառյալ):

7.1.3. Այն դեպքում, երբ Բանկը հանդես է գալիս որպես կանխիկ Արտարժույթ վաճառող, սույն համաձայնագրով սահմանված ժամկետներում կանխիկ Արտարժույթը Կենտրոնական բանկի դրամարկղ չմուտքագրելու կամ անպատշաճ կերպով կատարելու դեպքում վճարում է տուժանք՝ Գործարքի դրամային համարժեքի 0.5%-ի չափով, իսկ Հայտը և Հայտի հաստատումը ուժը կորցրած են ճանաչվում:

7.1.4. Այն դեպքում, երբ Բանկը հանդես է գալիս որպես Արտարժույթի տրամադրման սվոփ կամ Արտարժույթի ներգրավման սվոփ Գործարքի կողմ, Արտարժույթի տրամադրման սվոփի առաջին քայլի կամ Արտարժույթի ներգրավման սվոփի երկրորդ քայլի իրականացման ժամանակ սույն համաձայնագրով սահմանված ժամկետներում արտարժութային գումարների մուտքագրումը Կենտրոնական բանկի կողմից նշված արտարժութային հաշվին չապահովելու կամ անպատշաճ կերպով կատարելու դեպքում վճարում է տուժանք՝ յուրաքանչյուր ուշացած օրացուցային օրվա համար Գործարքի դրամային համարժեքի 0.5%-ի չափով: Սույն կետով նախատեսված տուժանքները հաշվարկվում են Գործարքի համապատասխան քայլի Կատարման օրվան հաջորդող օրացուցային օրվանից հաշված առավելագույնը երեք Աշխատանքային օր (բացառությամբ սույն ենթակետի երկրորդ մասով նախատեսված դեպքերի), որից հետո Բանկի կողմից պարտավորությունը չկատարելու պարագայում Հայտը և Հայտի հաստատումը ուժը կորցրած են ճանաչվում, ընդ որում, Արտարժույթի ներգրավման սվոփի երկրորդ քայլի իրականացման դեպքում Հայտն ուժը կորցրած է ճանաչվում միայն երկրորդ քայլի մասով, և Կենտրոնական բանկը հետ է գանձում Բանկի թղթակցային հաշվին մուտքագրված Գործարքի դրամային համարժեքի գումարը, իսկ Արտարժույթի ներգրավման սվոփի երկրորդ քայլի իրականացման ժամանակ նաև Սվոփ տոկոսադրույքին համապատասխան գումարը:

Սույն ենթակետի առաջին մասով նախատեսված հիմքով Հայտը և Հայտի հաստատումը ուժը կորցրած ճանաչվելու օրը Բանկի թղթակցային հաշվում գանձման ենթակա գումարի բացակայության կամ մասնակի առկայության դեպքում Կենտրոնական բանկը Բանկի թղթակցային հաշվից գանձում է համապատաս-

խան դրամական միջոցները դրանց առկայության առաջին իսկ պահին, առկա գումարի չափով՝ մինչև գանձման ենթակա գումարի ամբողջական մարումը: Կենտրոնական բանկը Բանկի թղթակցային հաշվից գանձում է նաև տուժանք բացակայող միջոցների 0.5%-ի չափով՝ մինչև բացակայող միջոցների ամբողջական գանձման օրը (ներառյալ):

7.1.5. Այն դեպքում, երբ Բանկը հանդես է գալիս որպես Արտարժույթի ներգրավման սվոփ կամ Արտարժույթի տրամադրման սվոփ Գործարքի կողմ, Արտարժույթի ներգրավման սվոփի առաջին քայլի կամ Արտարժույթի տրամադրման սվոփի երկրորդ քայլի իրականացման ժամանակ սույն համաձայնագրով սահմանված օրվա դրությամբ իր թղթակցային հաշվում Գործարքի դրամային համարժեքի չափով, իսկ Արտարժույթի տրամադրման սվոփի երկրորդ քայլի իրականացման ժամանակ՝ նաև Սվոփ տոկոսադրույքին համապատասխան գումարի չափով դրամական միջոցների բացակայության դեպքում վճարում է տուժանք՝ Հայտում նշված Գործարքի դրամային համարժեքի 0.5%-ի չափով, իսկ Արտարժույթի տրամադրման սվոփի երկրորդ քայլի իրականացման ժամանակ վճարում է նաև Սվոփ տոկոսադրույքին համապատասխան գումար, իսկ Հայտը և Հայտի հաստատումը ուժը կորցրած են ճանաչվում, ընդ որում, Արտարժույթի տրամադրման սվոփի երկրորդ քայլի իրականացման դեպքում Հայտն ուժը կորցրած է ճանաչվում միայն երկրորդ քայլի մասով:

Սույն ենթակետի առաջին մասով նախատեսված հիմքով Հայտը և Հայտի հաստատումը ուժը կորցրած ճանաչվելու օրը Բանկի թղթակցային հաշվում գանձման ենթակա գումարի բացակայության կամ մասնակի առկայության դեպքում Կենտրոնական բանկը Բանկի թղթակցային հաշվից գանձում է համապատասխան դրամական միջոցները դրանց առկայության առաջին իսկ պահին, առկա գումարի չափով՝ մինչև գանձման ենթակա գումարի ամբողջական մարումը: Կենտրոնական բանկը Բանկի թղթակցային հաշվից գանձում է նաև տուժանք՝ բացակայող միջոցների 0.5%-ի չափով, մինչև բացակայող միջոցների ամբողջական գանձման օրը (ներառյալ):

7.1.6. Արտարժույթի կանխիկացման Գործարքի իրականացման ժամանակ Բանկը սույն համաձայնագրով սահմանված ժամկետներում արտարժութային գումարների մուտքագրումը Կենտրոնական բանկի կողմից նշված արտարժութային հաշվին չապահովելու կամ անպատշաճ կերպով կատարելու դեպքում վճարում է տուժանք՝ Գործարքի ծավալի 0.5%-ի չափով, ընդ որում, տուժանքը հաշվարկվում է ՀՀ դրամով՝ Կենտրոնական բանկի կողմից Գործարքի կատարման օրվա դրությամբ սահմանված հաշվարկային փոխարժեքով, իսկ Հայտը և Հայտի հաստատումը ուժը կորցրած են ճանաչվում:

7.1.7. Արտարժույթի ապականխիկացման Գործարքի իրականացման ժամանակ Բանկը սույն համաձայնագրով սահմանված ժամկետներում կանխիկ Արտարժույթը Կենտրոնական բանկի դրամարկղ չմուտքագրելու կամ անպատշաճ կերպով կատարելու դեպքում վճարում է տուժանք՝ Գործարքի ծավալի 0.5%-ի չափով, ընդ որում, տուժանքը հաշվարկվում է ՀՀ դրամով՝ Կենտրոնական բանկի կողմից Գործարքի կատարման օրվա դրությամբ սահմանված հաշվարկային փոխարժեքով, իսկ Հայտը և Հայտի հաստատումը ուժը կորցրած են ճանաչվում:

7.1.8. Արտարժույթի կանխիկացման կամ ապականխիկացման Գործարքի իրականացման ժամանակ սույն համաձայնագրով սահմանված օրվա դրությամբ իր թղթակցային հաշվում վճարման ենթակա միջնորդավճարին համապատասխան դրամական միջոցներ չունենալու դեպքում Բանկը վճարում է տուժանք՝ Գործարքի ծավալի 0.5%-ի չափով, ընդ որում, տուժանքը հաշվարկվում է ՀՀ դրամով՝ Կենտրոնական բանկի կողմից Գործարքի կատարման օրվա դրությամբ սահմանված հաշվարկային փոխարժեքով, իսկ Հայտը և Հայտի հաստատումը ուժը կորցրած են ճանաչվում:

7.2. Կենտրոնական բանկի պատասխանատվությունը.

7.2.1. Այն դեպքում, երբ Կենտրոնական բանկը հանդես է գալիս որպես Արտարժույթի Գնորդ, սույն համաձայնագրով սահմանված ժամկետներում Բանկի թղթակցային հաշվին Գործարքի դրամային համարժեքի չափով դրամի մուտքագրումը չապահովելու կամ անպատշաճ կերպով կատարելու դեպքում վճարում է տուժանք՝ Գործարքի դրամային համարժեքի 0.5%-ի չափով, իսկ Հայտը և Հայտի հաստատումը ուժը կորցրած են ճանաչվում:

7.2.2. Այն դեպքում, երբ Կենտրոնական բանկը հանդես է գալիս որպես անկանխիկ Արտարժույթ վաճառող, սույն համաձայնագրով սահմանված ժամկետներում արտարժութային գումարների մուտքագրումը Բանկի կողմից նշված արտարժութային հաշվին չապահովելու կամ անպատշաճ կերպով կատարելու դեպքում վճարում է տուժանք՝ յուրաքանչյուր ուշացած օրացուցային օրվա համար Գործարքի դրամային համարժեքի 0.5%-ի չափով: Սույն ենթակետով նախատեսված տուժանքները հաշվարկվում են Գործարքի Կատարման օրվան հաջորդող օրացուցային օրվանից հաշված առավելագույնը երեք Աշխատանքային օր, որից հետո Կենտրոնական բանկի կողմից պարտավորությունը չկատարելու պարագայում Կենտրոնական բանկը հետ է վճարում Բանկի թղթակցային հաշվից գանձված դրամական գումարը:

7.2.3. Այն դեպքում, երբ Կենտրոնական բանկը հանդես է գալիս որպես կանխիկ Արտարժույթ վաճառող, սույն համաձայնագրով սահմանված ժամկետներում կանխիկ Արտարժույթը Բանկին չտրամադրելու կամ անպատշաճ կերպով կատարելու դեպքում վճարում է տուժանք՝ Գործարքի դրամային համարժեքի 0.5%-ի չափով, իսկ Հայտը և Հայտի հաստատումը ուժը կորցրած են ճանաչվում:

7.2.4. Այն դեպքում, երբ Կենտրոնական բանկը հանդես է գալիս որպես Արտարժույթի ներգրավման սվոփ կամ Արտարժույթի տրամադրման սվոփ Գործարքի կողմ, Արտարժույթի ներգրավման սվոփի առաջին քայլի կամ Արտարժույթի տրամադրման սվոփի երկրորդ քայլի իրականացման ժամանակ սույն համաձայնագրով սահմանված ժամկետներում արտարժութային գումարների մուտքագրումը Բանկի կողմից նշված արտարժութային հաշվին չապահովելու կամ անպատշաճ կերպով կատարելու դեպքում վճարում է տուժանք՝ յուրաքանչյուր ուշացած օրացուցային օրվա համար Գործարքի դրամային համարժեքի 0.5%-ի չափով: Սույն ենթակետով նախատեսված տուժանքները հաշվարկվում են Գործարքի համապատասխան քայլի Կատարման օրվան հաջորդող օրացուցային օրվանից հաշված առավելագույնը երեք Աշխատանքային օր, որից հետո, Կենտրոնական բանկի կողմից պարտավորությունը չկատարելու պարագայում, Հայտը և Հայտի հաստատումը ուժը կորցրած են ճանաչվում, ընդ որում, Արտարժույթի տրամադրման սվոփի երկրորդ քայլի իրականացման դեպքում Հայտն ուժը կորցրած է ճանաչվում միայն երկրորդ քայլի մասով, և Կենտրոնական բանկը հետ է վճարում Բանկի թղթակցային հաշվից գանձված Գործարքի դրամային համարժեքի գումարը, իսկ Արտարժույթի տրամադրման սվոփի երկրորդ քայլի իրականացման դեպքում նաև Սվոփ տոկոսադրույքին համապատասխան գումարը:

7.2.5. Այն դեպքում, երբ Կենտրոնական բանկը հանդես է գալիս որպես Արտարժույթի ներգրավման սվոփ կամ Արտարժույթի տրամադրման սվոփ Գործարքի կողմ, Արտարժույթի տրամադրման սվոփի առաջին քայլի կամ Արտարժույթի ներգրավման սվոփի երկրորդ քայլի իրականացման ժամանակ սույն համաձայնագրով սահմանված ժամկետներում Բանկի թղթակցային հաշվին Գործարքի դրամային համարժեքի, իսկ Արտարժույթի ներգրավման սվոփի երկրորդ քայլի իրականացման ժամանակ նաև Սվոփ տոկոսադրույքին համապատասխան գումարի մուտքագրումը չապահովելու կամ անպատշաճ կերպով կատարելու դեպքում վճարում է տուժանք՝ Գործարքի դրամային համարժեքի 0.5%-ի չափով, իսկ Արտարժույթի ներգրավման սվոփի երկրորդ քայլի իրականացման ժամանակ՝ նաև Սվոփ տոկոսադրույքին համապատասխան գումար, իսկ Հայտը և Հայտի հաստատումը ուժը կորցրած են ճանաչվում, ընդ որում, Արտարժույթի ներգրավման սվոփի երկրորդ քայլի իրականացման դեպքում Հայտն ուժը կորցրած է ճանաչվում միայն երկրորդ քայլի մասով:

7.2.6. Արտարժույթի կանխիկացման Գործարքի իրականացման ժամանակ Կենտրոնական բանկը սույն համաձայնագրով սահմանված ժամկետներում կանխիկ Արտարժույթը Բանկին չտրամադրելու կամ անպատշաճ կերպով կատարելու դեպքում վճարում է տուժանք՝ Գործարքի ծավալի 0.5%-ի չափով, ընդ որում, տուժանքը հաշվարկվում է ՀՀ դրամով՝ Կենտրոնական բանկի կողմից Գործարքի կատարման օրվա դրությամբ սահմանված հաշվարկային փոխարժեքով, իսկ Հայտը և Հայտի հաստատումը ուժը կորցրած են ճանաչվում:

7.2.7. Արտարժույթի ապականխիկացման Գործարքի իրականացման ժամանակ Կենտրոնական բանկը, սույն համաձայնագրով սահմանված ժամկետներում արտարժութային փոխանցումները չկատարելու կամ անպատշաճ կերպով կատարելու դեպքում վճարում է տուժանք՝ Գործարքի ծավալի 0.5%-ի չափով, ընդ որում, տուժանքը հաշվարկվում է ՀՀ դրամով՝ Կենտրոնական բանկի կողմից Գործարքի կատարման օրվա դրությամբ սահմանված հաշվարկային փոխարժեքով, իսկ Հայտը և Հայտի հաստատումը ուժը կորցրած են ճանաչվում:

7.2.8. Արտարժույթի կանխիկացման կամ ապականխիկացման Գործարքի իրականացման ժամանակ սույն համաձայնագրով սահմանված օրվա դրությամբ վճարման ենթակա միջնորդավճարին համապատասխան դրամական միջոցները Կենտրոնական բանկում Բանկի թղթակցային հաշվին չմուտքագրելու կամ անպատշաճ կերպով կատարելու դեպքում Կենտրոնական բանկը վճարում է տուժանք՝ Գործարքի ծավալի 0.5%-ի չափով, ընդ որում, տուժանքը հաշվարկվում է ՀՀ դրամով՝ Կենտրոնական բանկի կողմից Գործարքի կատարման օրվա դրությամբ սահմանված հաշվարկային փոխարժեքով, իսկ Հայտը և Հայտի հաստատումը ուժը կորցրած են ճանաչվում:

7.2.9. Սույն համաձայնագրով Կենտրոնական բանկին իրավունք է վերապահվում Կենտրոնական բանկում գտնվող Բանկի թղթակցային հաշվից անվիճելի (անակցեպտ) կարգով գանձել սույն հոդվածով նախատեսված տուժանքի գումարները:

7.3. Կողմերը օրենքով սահմանված կարգով պատասխանատվություն են կրում սույն համաձայնագրով նախատեսված գործառնությունների վերաբերյալ տեղեկությունները երրորդ անձանց տրամադրելու համար՝ բացառությամբ «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքով սահմանված դեպքերի:

8. Վեճերի լուծման կարգը

8.1. Սույն համաձայնագրի հետ կապված վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով՝ երեսունօրյա ժամկետում: Սույն համաձայնագրով որևէ Կողմին ներկայացված առարկությունները վերջինիս կողմից ենթակա են պարզաբանման 3 Աշխատանքային օրվա ընթացքում:

8.2. Առաջացած վեճերը բանակցությունների միջոցով չլուծվելու դեպքում լուծվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դատական կարգով:

9. Համաձայնագրի գործողության ժամկետը

9.1. Սույն համաձայնագիրը կնքվում է անժամկետ: Դրա գործողությունը դադարեցվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Բանկի բանկային գործունեության լիցենզիան ուժը կորցրած կամ անվավեր ճանաչվելու պահից:

9.2. Համաձայնագրի գործողության դադարեցման դեպքում Կողմերի՝ սույն համաձայնագրով ստանձնած և չկատարած պարտավորությունները ենթակա են պարտադիր կատարման, եթե ՀՀ օրենսդրությամբ այլ բան սահմանված չէ, կամ եթե Կողմերն այլ բան չեն պայմանավորվել:

9.3. Սույն համաձայնագիրը կարող է դադարեցվել Կողմերից որևէ մեկի գրավոր դիմումի հիման վրա, որը պետք է ներկայացվի համաձայնագրի դադարեցման օրվանից մեկ ամիս առաջ:

9.4. Կողմերը պարտավորվում են եռօրյա ժամկետում գրավոր ձևով միմյանց տեղեկացնել իրավաբանական, փոստային կամ էլեկտրոնային հասցեների, տելեքսի, հեռատիպի, հեռախոսի, ֆաքսի, այլ փոփոխությունների մասին, որոնք ապահովում են սույն համաձայնագրով սահմանված դրույթների կատարումը:

10. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ֆորս-մաժոր)

Սույն համաձայնագրի դրույթները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե այն հետևանք է հանդիսացել պարտավորությունների կատարման վրա էականորեն ազդող անհաղթահարելի ուժի և որպես ֆորս-մաժոր համարվող պայմանների ազդեցության:

11. Այլ դրույթներ

Սույն համաձայնագիրը կազմված և ստորագրված է 2 օրինակից (յուրաքանչյուր Կողմին՝ մեկական օրինակ): Երկու օրինակներն էլ ունեն հավասար իրավաբանական ուժ:

12. Կողմերի իրավաբանական հասցեները

Կենտրոնական բանկ

Հայաստանի Հանրապետություն
375010, Երևան,
Վ. Սարգսյան փ. 6,

Հեռախոս _____
Տելեքս _____
Ֆաքս _____
ՀՀ կենտրոնական բանկի նախագահ
Տ. Սարգսյան _____
Կ.Տ.

Բանկ

Հայաստանի Հանրապետություն
_____
_____

Հեռախոս _____
Տելեքս _____
Ֆաքս _____
Բանկի գործադիր տնօրեն (վարչության նախագահ)_____
Կ.Տ.

Ենթահավելված 1

ԱՐՏԱՐԺՈՒՅԹԻ ԳՆՄԱՆ
ՀԱՅՏ ԹԻՎ _____

Ներկայացվում է համաձայն Կենտրոնական բանկի և « _____ » բանկի միջև « __ » _____ 2003 թ. կնքված արտարժույթի առք ու վաճառքի, արժութային սվոփ, կանխիկացման և ապականխիկացման գործառնությունների կնքման թիվ _____ գլխավոր համաձայնագրի:

Առաջարկում ենք « _____ » բանկին վաճառել _____ հետևյալ պայմաններով.
արտարժույթի տեսակը

Գնորդի արտարժութային հաշվի համար	
Արտարժույթի տեսակ և վճարման ձև	
Կատարման օր	
Գործարքի ծավալ	
Փոխարժեք	
Գործարքի դրամային համարժեք	
Այլ նշումներ	

« _____ » բանկը ձեռք է բերում իրավունքներ և կրում պարտավորություններ՝ համաձայն Կենտրոնական բանկի և « _____ » բանկի միջև «__» _____ 2003 թ. կնքված արտարժույթի առք ու վաճառքի, արժութային սվոփ, կանխիկացման և ապականխիկացման գործառնությունների կնքման թիվ _____ գլխավոր համաձայնագրի համապատասխան դրույթների:

_____
_____
Կ.Տ.
« __ » _____ 200_ թ.

Ենթահավելված 2

ԱՐՏԱՐԺՈՒՅԹԻ ՎԱՃԱՌՔԻ
ՀԱՅՏ ԹԻՎ _____

Ներկայացվում է համաձայն Կենտրոնական բանկի և « _____ » բանկի միջև « __ » _____ 2003 թ. կնքված արտարժույթի առք ու վաճառքի, արժութային սվոփ, կանխիկացման և ապականխիկացման գործառնությունների կնքման թիվ _____ գլխավոր համաձայնագրի:

Առաջարկում ենք « _____ » բանկից գնել _____ հետևյալ պայմաններով.
արտարժույթի տեսակը

Վաճառողի դրամային հաշվի համար	
Արտարժույթի տեսակ և վճարման ձև	
Կատարման օր	
Գործարքի ծավալ	
Փոխարժեք	
Գործարքի դրամային համարժեք	
Այլ նշումներ	

«_____» բանկը ձեռք է բերում իրավունքներ և կրում պարտավորություններ՝ համաձայն Կենտրոնական բանկի և «_____» բանկի միջև «__»_____ 2003 թ. կնքված արտարժույթի առք ու վաճառքի, արժութային սվոփ, կանխիկացման և ապականխիկացման գործառնությունների կնքման թիվ _____ գլխավոր համաձայնագրի համապատասխան դրույթների:

_____
_____
Կ.Տ.
« __ » _____ 200_ թ.

Ենթահավելված 3

ԱՐՏԱՐԺՈՒՅԹԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՍՎՈՓ
ՀԱՅՏ ԹԻՎ _____

Ներկայացվում է համաձայն Կենտրոնական բանկի և « _____ » բանկի միջև « __ » _____ 2003 թ. կնքված արտարժույթի առք ու վաճառքի, արժութային սվոփ, կանխիկացման և ապականխիկացման գործառնությունների կնքման թիվ _____ գլխավոր համաձայնագրի:

Առաջարկում ենք «_____ » բանկից ներգրավել _____ հետևյալ պայմաններով.
արտարժույթի տեսակը

Բանկի դրամային հաշվի համար	
Բանկի արտարժութային հաշվի համար	
Արտարժույթի տեսակ	
Կատարման օր (1-ին քայլ)	
Կատարման օր (2-րդ քայլ)	
Գործարքի ծավալ	
Փոխարժեք	
Գործարքի դրամային համարժեք	
Սվոփ տոկոսադրույք	
Սվոփ տոկոսադրույքին համապատասխան գումար	
Այլ նշումներ	

«_____» բանկը ձեռք է բերում իրավունքներ և կրում պարտավորություններ՝ համաձայն Կենտրոնական բանկի և « _____ » բանկի միջև « __ » _____ 2003 թ. կնքված արտարժույթի առք ու վաճառքի, արժութային սվոփ, կանխիկացման և ապականխիկացման գործառնությունների կնքման թիվ _____ գլխավոր համաձայնագրի համապատասխան դրույթների:

_____
_____

Կ.Տ.

« __ » _____ 200_ թ.

Ենթահավելված 4

ԱՐՏԱՐԺՈՒՅԹԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ՍՎՈՓ
ՀԱՅՏ ԹԻՎ _____

Ներկայացվում է համաձայն Կենտրոնական բանկի և « _____ » բանկի միջև « __ » _____ 2003 թ. կնքված արտարժույթի առք ու վաճառքի, արժութային սվոփ, կանխիկացման և ապականխիկացման գործառնությունների կնքման թիվ _____ գլխավոր համաձայնագրի:

Առաջարկում ենք « _____ » բանկին տրամադրել _____ հետևյալ պայմաններով.
արտարժույթի տեսակը

Բանկի դրամային հաշվի համար	
Բանկի արտարժութային հաշվի համար	
Արտարժույթի տեսակ	
Կատարման օր (1-ին քայլ)	
Կատարման օր (2-րդ քայլ)	
Գործարքի ծավալ	
Փոխարժեք	
Գործարքի դրամային համարժեք	
Սվոփ տոկոսադրույք	
Սվոփ տոկոսադրույքին համապատասխան գումար	
Այլ նշումներ	

« _____ » բանկը ձեռք է բերում իրավունքներ և կրում պարտավորություններ՝ համաձայն Կենտրոնական բանկի և « _____ » բանկի միջև « __ » _____ 2003 թ. կնքված արտարժույթի առք ու վաճառքի, արժութային սվոփ, կանխիկացման և ապականխիկացման գործառնությունների կնքման թիվ _____ գլխավոր համաձայնագրի համապատասխան դրույթների:

_____
_____

Կ.Տ.

« __ » _____ 200_ թ.

Ենթահավելված 5

ԱՐՏԱՐԺՈՒՅԹԻ ԿԱՆԽԻԿԱՑՄԱՆ ՀԱՅՏ ԹԻՎ _____

Ներկայացվում է համաձայն Կենտրոնական բանկի և « _____ » բանկի միջև « __ » _____ 2003 թ. կնքված արտարժույթի առք ու վաճառքի, արժութային սվոփ, կանխիկացման և ապականխիկացման գործառնությունների կնքման թիվ _____ գլխավոր համաձայնագրի:

Առաջարկում ենք « _____ » բանկին տրամադրել կանխիկ _____
արտարժույթի տեսակը
անկանխիկի դիմաց՝ հետևյալ պայմաններով.

Բանկի դրամային հաշվի համար	
Արտարժույթի տեսակ	
Կատարման օր	
Գործարքի ծավալ	
Միջնորդավճար	
Միջնորդավճար վճարող կողմ	
Միջնորդավճարի գումար (ՀՀ դրամով)	
Այլ նշումներ	

« _____ » բանկը ձեռք է բերում իրավունքներ և կրում պարտավորություններ՝ համաձայն Կենտրոնական բանկի և « _____ » բանկի միջև « __ » _____ 2003 թ. կնքված արտարժույթի առք ու վաճառքի, կանխիկացման և ապականխիկացման գործառնությունների կնքման թիվ _____ գլխավոր համաձայնագրի համապատասխան դրույթների:

_____
_____
Կ.Տ.
« __ » _____ 200_ թ.

Ենթահավելված 6

ԱՐՏԱՐԺՈՒՅԹԻ ԱՊԱԿԱՆԽԻԿԱՑՄԱՆ ՀԱՅՏ ԹԻՎ _____

Ներկայացվում է համաձայն Կենտրոնական բանկի և « _____ » բանկի միջև « __ » _____ 2003 թ. կնքված արտարժույթի առք ու վաճառքի, արժութային սվոփ, կանխիկացման և ապականխիկացման գործառնությունների կնքման թիվ _____ գլխավոր համաձայնագրի:

Առաջարկում ենք « _____ » բանկին տրամադրել անկանխիկ _____
արտարժույթի տեսակը
կանխիկի դիմաց՝ հետևյալ պայմաններով.

Բանկի դրամային հաշվի համար	
Բանկի արտարժութային հաշվի համար	
Արտարժույթի տեսակ	
Կատարման օր	
Գործարքի ծավալ	
Միջնորդավճար	
Միջնորդավճար վճարող կողմ	
Միջնորդավճարի գումար (ՀՀ դրամով)	
Այլ նշումներ	

« _____ » բանկը ձեռք է բերում իրավունքներ և կրում պարտավորություններ՝ համաձայն Կենտրոնական բանկի և « _____ » բանկի միջև « __ » _____ 2003 թ. կնքված արտարժույթի առք ու վաճառքի, կանխիկացման և ապականխիկացման գործառնությունների կնքման թիվ _____ գլխավոր համաձայնագրի համապատասխան դրույթների:

_____
_____
Կ.Տ.
« __ » _____ 200_ թ.

Ենթահավելված 7

ԱՐՏԱՐԺՈՒՅԹԻ ԳՆՄԱՆ ՀԱՅՏԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ (ՄԱՍՆԱԿԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ)

Առաքվում է «_____» բանկին՝ համաձայն Կենտրոնական բանկի և «_____ » բանկի միջև «__ » _____ 2003 թ. կնքված արտարժույթի առք ու վաճառքի, արժութային սվոփ, կանխիկացման և ապականխիկացման գործառնությունների կնքման թիվ _____ գլխավոր համաձայնագրի:

Ձեր կողմից «__ » _____ 2003 թ. ժամը _____-ին Կենտրոնական բանկ ներկայացված թիվ _____ հայտը համարել հաստատված (մասնակի հաստատված _____ գործարքի ծավալի չափով):

Կենտրոնական բանկը ձեռք է բերում իրավունքներ և կրում պարտավորություններ՝ համաձայն Կենտրոնական բանկի և «_____ » բանկի միջև «__ » _____ 2003 թ. կնքված արտարժույթի առք ու վաճառքի, արժութային սվոփ, կանխիկացման և ապականխիկացման գործառնությունների կնքման թիվ _____ գլխավոր համաձայնագրի համապատասխան դրույթների:

Կենտրոնական բանկ

_____

Կ.Տ.

« __ » _____ 200_ թ.

Ենթահավելված 8

ԱՐՏԱՐԺՈՒՅԹԻ ՎԱՃԱՌՔԻ ՀԱՅՏԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ (ՄԱՍՆԱԿԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ)

Առաքվում է «_____ » բանկին՝ համաձայն Կենտրոնական բանկի և «_____ » բանկի միջև « __ » _____ 2003 թ. կնքված արտարժույթի առք ու վաճառքի, արժութային սվոփ, կանխիկացման և ապականխիկացման գործառնությունների կնքման թիվ _____ գլխավոր համաձայնագրի:

Ձեր կողմից « __ » _____ 2003 թ. ժամը _____-ին Կենտրոնական բանկ ներկայացված թիվ _____ հայտը համարել հաստատված (մասնակի հաստատված _____ գործարքի ծավալի չափով):

Վաճառված արտարժույթը փոխանցել _____:

Կենտրոնական բանկը ձեռք է բերում իրավունքներ և կրում պարտավորություններ՝ համաձայն Կենտրոնական բանկի և « _____ » բանկի միջև « __ » _____ 2003 թ. կնքված արտարժույթի առք ու վաճառքի, արժութային սվոփ, կանխիկացման և ապականխիկացման գործառնությունների կնքման թիվ _____ գլխավոր համաձայնագրի համապատասխան դրույթների:

Կենտրոնական բանկ

_____

Կ.Տ.

« __ » _____ 200_ թ.

Ենթահավելված 9

ԱՐՏԱՐԺՈՒՅԹԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ/ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ՍՎՈՓ ՀԱՅՏԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ (ՄԱՍՆԱԿԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ)

Առաքվում է «_____» բանկին՝ համաձայն Կենտրոնական բանկի և «_____» բանկի միջև « __ » _____ 2003 թ. կնքված արտարժույթի առք ու վաճառքի, արժութային սվոփ, կանխիկացման և ապականխիկացման գործառնությունների կնքման թիվ _____ գլխավոր համաձայնագրի:

Ձեր կողմից « __ » _____ 2003 թ. ժամը _____-ին Կենտրոնական բանկ ներկայացված թիվ _____ հայտը համարել հաստատված (մասնակի հաստատված _____ գործարքի ծավալի չափով):

Արտարժույթը փոխանցել _____ :

Կենտրոնական բանկը ձեռք է բերում իրավունքներ և կրում պարտավորություններ՝ համաձայն Կենտրոնական բանկի և « _____ » բանկի միջև « __ » _____ 2003 թ. կնքված արտարժույթի առք ու վաճառքի, արժութային սվոփ, կանխիկացման և ապականխիկացման գործառնությունների կնքման թիվ _____ գլխավոր համաձայնագրի համապատասխան դրույթների:

Կենտրոնական բանկ

_____

Կ.Տ.

« __ » _____ 200_ թ.

Ենթահավելված 10

ԱՐՏԱՐԺՈՒՅԹԻ ԿԱՆԽԻԿԱՑՄԱՆ ՀԱՅՏԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ

Առաքվում է « _____ » բանկին՝ համաձայն Կենտրոնական բանկի և « _____ » բանկի միջև « __ » _____ 2003 թ. կնքված արտարժույթի առք ու վաճառքի, արժութային սվոփ, կանխիկացման և ապականխիկացման գործառնությունների կնքման թիվ _____ գլխավոր համաձայնագրի:

Ձեր կողմից « __ » _____ 2003 թ. ժամը _____-ին Կենտրոնական բանկ ներկայացված թիվ _____ հայտը համարել ակցեպտավորված:

Արտարժույթը փոխանցել _____ :

Կենտրոնական բանկը ձեռք է բերում իրավունքներ և կրում պարտավորություններ՝ համաձայն Կենտրոնական բանկի և «_____» բանկի միջև « __ » _____ 2003 թ. կնքված արտարժույթի առք ու վաճառքի, արժութային սվոփ, կանխիկացման և ապականխիկացման գործառնությունների կնքման թիվ _____ գլխավոր համաձայնագրի համապատասխան դրույթների:

Կենտրոնական բանկ

_____

Կ.Տ.

« __ » _____ 200_ թ.

Ենթահավելված 11

ԱՐՏԱՐԺՈՒՅԹԻ ԱՊԱԿԱՆԽԻԿԱՑՄԱՆ ՀԱՅՏԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ

Առաքվում է « _____ » բանկին՝ համաձայն Կենտրոնական բանկի և « _____ » բանկի միջև « __ » _____ 2003 թ. կնքված արտարժույթի առք ու վաճառքի, արժութային սվոփ, կանխիկացման և ապականխիկացման գործառնությունների կնքման թիվ _____ գլխավոր համաձայնագրի:

